

«ՍՊԱՌՈՂ»

տեղեկատվական, վերլուծական,
խորհրդատվական պարբերական

Հիմնադիր և հրատարակիչ՝
«ԱՆՆԱ»

Սպառողների ազգային ասոցիացիա

Մելիտա ՀԱԿՈՐՅԱՆ
Գլխավոր խմբագիր

Սամվել ՆԱՅԱՊԵՏՅԱՆ
Գործադիր տնօրեն

Արուսյակ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Խմբագիր

Լիա ՕՍԻՊՅԱՆ

Սննդամթերքի անվտանգության
վերլուծության պատասխանատու,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ֆրունզե ՀԱՅԹՅԱՆ

Մարքեթինգի և մոնիթորինգային
հետազոտությունների պատասխանատու,
Սննդի ապահովման ծառայությունների
սերտիֆիկացման փորձագետ, սննդի որակի աուդիտոր

Միլետա ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Ապրանքների և ծառայությունների
որակի վերլուծության պատասխանատու,
քիմիկոս, որակի աուդիտոր

Մելիտա ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների
որակի վերլուծության պատասխանատու,
Ասոցիացիայի գլխավոր տեխնոլոգ

Վարդուհի ՄԵԼԻՔՅԱՆ

Ասոցիացիայի գլխավոր փորձագետ,
Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի
Տեխնոլոգիաների և բնական գիտությունների
ամբիոնի վարիչ, տ. գ. թ., դոցենտ

Արամ ՆԱԶԱՐՅԱՆ

Տեղեկատվության վերլուծության պատասխանատու,
Երևանի Ազրարային համալսարանի դոցենտ

Աիդա ԻՍԿՈՅԱՆ

Իրավախորհրդատու,
ԵՊՀ Իրավաբանական ֆակուլտետի Քաղաքացիական
իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

Հասմիկ ՆԱՅԱՊԵՏՅԱՆ

Թարգմանիչ,
Ասոցիացիայի արտաքին հարաբերությունների գծով
փոխնախագահ

Աղավնի ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լրագրող

Նարինե ՀՈՎԿԱԿՍՅԱՆ

Սրբագրիչ

Գեղամ ՍԱՐԳՍՅԱՆ

Նկարիչ-դիզայներ

Զավեն ՄԱՐԿՈՍՅԱՆ

Լուսանկարիչ

«ՍՊԱՌՈՂ»

տեղեկատվական, վերլուծական,
խորհրդատվական պարբերականի
խմբագրական խորհուրդ

Էմիլ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայրապետ ԳԱԼՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բժշկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Կոնստանտին ԴԱՐՎԱԳՅՈՋՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Վիլեն ՀԱԿՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բժշկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Աիդա ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, քիմիական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Արամ ՇԱՀԻՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
քիմիական և ֆիզիկական գիտությունների դոկտոր

Երեն ԶԱԽՈՅԱՆ

Հայաստանի սպառողների ազգային ակադեմիայի
նախագահության պատվավոր անդամ

Միքայել ԶԱԽԻՆՅԱՆ

Քիմիական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Կառլեն ԱՐԱՍՅԱՆ

ՌԴ Զափագիտության ակադեմիայի ակադեմիկոս,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Արամ ՀԱՅԹՅԱՆ

Պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Կարեն ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Գևուշ ԲԱՐՂԱՍԱՐՅԱՆ

Տնտեսագիտության
դոկտոր, պրոֆեսոր

Արմեն ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Եկոլոգոնոսֆերայի հետազոտությունների
կենտրոնի տնօրեն

Բաբկեն ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Աշոտ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայաստանի սպառողների ազգային ակադեմիայի
նախագահության պատվավոր անդամ

Գագիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության Առևտրի և
ծառայությունների վարչության պետի տեղակալ

Ալբերտ ՄԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԱՆ Շրջակա միջավայրի հիգիենայի և կանխարգելիչ
թունաբանության ԳՀԻ տնօրեն, բժշկական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Կարինե ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կենսաբանական գիտությունների
թեկնածու

Դորա ՍԱՔՈՒՆՅԱՆ

Մոնրեալի ՄաքՔիլ համալսարանի
դասախոս, դոկտոր, պրոֆեսոր


ՄՊԱՌՈՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

1962 թվականի մարտի 15-ին ԱՄՆ Կոնգրեսում ելույթի ժամանակ նախագահ Ջոն Բենեդին պատմության մեջ առաջին անգամ պաշտոնապես անդրադարձավ քաղաքացու, իբրև սպառողի, իրավունքներին: Արդյունքում ծնվեց մի փաստաթուղթ, որով ամրագրվում էին սպառողի չորս հիմնական իրավունքները: Ավելի ուշ սրանց գումարվեց միջազգային հանրության հավանությանն արժանացած ևս չորս իրավունք:

- ♦ անվտանգության իրավունքը,
- ♦ ընտրության իրավունքը,
- ♦ տեղեկատվություն ստանալու իրավունքը,
- ♦ լսված լինելու իրավունքը:

- ♦ վնասների փոխհատուցման իրավունքը,
- ♦ սպառողական կրթության իրավունքը,
- ♦ հիմնական կարիքները բավարարելու իրավունքը,
- ♦ առողջ միջավայրի իրավունքը:

ԻՐԱԶԵԿ ՄՊԱՌՈՂԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ



ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանում անկախության հռչակումից հետո երկիրը, ապրելով անցումային ժամանակաշրջան, չէր կարող գերծ մնալ սպառողական շուկայի զարգացմանը վերաբերող մարտահրավերներից: Խնդիրն առավել ակնբախ է հեռավոր մարզերում, որտեղ բնակչությունն անտեղյակ է իր սպառողական իրավունքներից:

Օգտվելով թե մարզկենտրոնների և թե գյուղերի բնակչության անտեղյակությունից՝ որոշ «բիզնեսմեններ» այնտեղ իրացնում են ապրանքներ, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ որակին ու ներկայացվող տեղական և միջազգային ստանդարտներին, ապրանքներ, որոնք մայրաքաղաքի քիչ թե շատ տեղեկացված բնակչության շրջանում արդեն անհնար է իրացնել: Խնդիրն ավելի լուրջ է դառնում, երբ ապրանքը ժամկետանց է: Հետևաբար, հենց մարզային բնակավայրերում է մեծանում այդ ապրանքների գործածության հետևանքով ազգաբնակչության առողջությանն սպառնացող վտանգի չափը: ՀՀ մայրաքաղաքից դուրս, հատկապես հեռավոր մարզային բնակավայրերում, ազգաբնակչությունը հիմնականում անտեղյակ է սպառողների իրավունքներից ու դրանց պաշտպանությանն ուղղված գործողություններից, որոնք հնարավոր է իրականացնել օրենքով սահմանված կարգով:

Սպառողների ազգային ասոցիացիայի մասնագետների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մայրաքաղաքում ապրող սպառողները, որոնք վերջին 10-15 տարիներին քիչ թե շատ զինվել են սպառողական գիտելիքներով նաև ասոցիացիայի ակտիվ գործունեության շնորհիվ, արդեն հիմնականում ի գործու են պաշտպանելու սեփական շահերն ու իրավունքներն սպառողական շուկայում: Անհրաժեշտության դեպքում նրանք գիտեն, որ կարող են դիմել նաև Սպառողների ազգային ասոցիացիայի կամ Հայաստանի սպառողների ազգային ակադեմիայի օգնությանը, որոնց համապատասխան բաժիններում և դեպարտամենտներում իրավաբանական խորհրդատվություն կամ ուղղակի սպառողական շուկայում իրենց ունենահարված իրավունքը պաշտպանելու գործում աջակցություն կստանան:

Հիմնախնդրի առաջացման հիմնական պատճառներից է մարզերում կապի և տեղեկատվության էլեկտրոնային միջոցների սակավ հասանելիությունը, ինչը խոչընդոտում է անհրաժեշտ տեղեկատվության տարածմանը: Թերթերի և ամսագրերի անբավարար ապահովումը գյու-


ՀՀ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31.1 հոդվածի՝

**պետությունը պաշտպանում է սպառողների շահերը,
իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝
ապրանքների, ծառայությունների և աշխատանքների
որակի վերահսկողության ուղղությամբ:**

Որակյան շրջաններում, ինչպես նաև մայրաքաղաքի բնակչության համեմատությամբ գյուղացիների ֆինանսական անբարենպաստ պայմանները նույնպես զգալիորեն խոչընդոտում են սպառողական շուկայում ճիշտ կողմնորոշվելուն նպաստող տեղեկատվություն ստանալուն: Բնակչությունն անգիտակցաբար դառնում է այն ապրանքների սպառողը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ առողջության վրա: Այս առումով շատ կարևոր է Տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ), այդ թվում՝ մարզպետարանի և համապատասխան գյուղական համայնքների գյուղապետարանների աշխատակիցների և տեղական ՀԱՄ-ների ներկայացուցիչների տեղեկացվածությունը «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի շրջանակում սպառողական շուկայում ազգաբնակչության շահերը պաշտպանելու վերաբերյալ: Մարզպետարանի և գյուղապետարանի սպառողական գիտելիքներին տիրապետող պաշտոնյան պետք է գիտակցի, որ ինքն ու իր ընտանիքի անդամներն էլ սպառողական նույն համայնքի ներկայացուցիչն են, և նրանց սպառողական շահերը չեն զատվում հասարակ բնակչի սպառողական շահերից: Չէ՞ որ յուրաքանչյուր սպառող, անկախ հասարակության մեջ զբաղեցրած դիրքից, բնակության վայրից, ազգությունից և անգամ կրոնական պատկանելությունից, ըստ ՀՀ օրենսդրության՝ պաշտպանված է օրենքով: Այլ բան է, որ հաճախ սպառողն անգամ տեղյակ էլ չէ նշված օրենքի գոյությունից և, ցավոք սրտի, հույս էլ չունի, թե օրենքները թղթի վրա լինելուց զատ կարող են նպաստել իր կյանքի բարելավմանը: Ահա թե ինչու «Իրազեկ սպառողի ձևավորում» ծրագրի շրջանակում Սպառողների ազգային ասոցիացիան մեկ անգամ ևս հրավիրում է սպառողների ուշադրությունը սեփական իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրների լուծման օրինական ծանապարհների բացահայտմանը: Դա կնպաստի մայրաքաղաքից հեռու ապրող բնակչության սպառողական գիտակցության բարձրացմանը: Իսկ գիտակից սպառողին, արդեն, հեշտ չի լինի անորակ սննդամթերք, լայն սպառման ապրանքներ կամ անորակ ծառայություններ մատուցելը: Արդյունքում, գործարարը և ծառայություն մատուցողն ստիպված կլինեն առաջարկել սպառողին միայն որակյալ ապրանք ու ծառայություն:

Այդպիսով, առողջ շուկայական հարաբերությունները կնպաստեն առողջ ազգաբնակչություն և առողջ սերունդ ունենալուն:



ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը կարգավորում է սպառողների և արտադրողների (կատարողների, վաճառողների) միջև ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ժամանակ ծագող հարաբերությունները, սահմանում է սպառողների կողմից պատշաճ որակի և սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) և դրանք արտադրողների (կատարողների, վաճառողների) մասին տեղեկատվության ստացման, սպառողների շահերի պետական և հասարակական պաշտպանության իրավունքները, ինչպես նաև սահմանում է այդ իրավունքների իրականացման մեխանիզմը:

որոնցով սահմանված են պարտադիր պահանջներ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ.

ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերություն՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) անհամապատասխանությունը նորմատիվ փաստաթղթերին, պայմանագրի պայմաններին կամ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին սովորաբար ներկայացվող պահանջներին.

ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի էական խախտում՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին առաջադրվող պահանջների էական խախտումներ (չվերացվող, ինչպես նաև այնպիսի խախտումներ, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո և նման բնույթի այլ խախտումներ), որոնց դեպքում սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ հրաժարվել պայմանագրի կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի (աշխատանքի, ծառայության) համար վճարված գումարը կամ պահանջել ոչ պատշաճ որակի ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) փոխարինելու պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով (աշխատանքով, ծառայությամբ).

ՉԼՈՒՄ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԳՎԱԾ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

սպառող՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացի.

սպառողների անորոշ շրջանակ՝ արտադրանքի (աշխատանքի, ծառայության) հնարավոր սպառողներ.

արտադրող՝ իրացման համար ապրանքներ արտադրող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

կատարող՝ սպառողների համար պայմանագրով աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

վաճառող՝ առուվաճառքի պայմանագրով սպառողներին ապրանք իրացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

նորմատիվ փաստաթուղթ՝ օրենքներ, օրենքով սահմանված կարգով նախատեսված այլ իրավական ակտեր (տեխնիկական կանոնակարգեր),

ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգություն՝ սպառողի կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի համար ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգությունը սովորական պայմաններում՝ դրա օգտագործման, պահման, փոխադրման, օգտահանման ժամանակ, ինչպես նաև աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գործընթացի անվտանգությունը.

ծառայության ժամկետ՝ ապրանքի շահագործման տևողությունը շահագործման կամ նորոգումից հետո շահագործումը վերսկսելու օրից մինչև իր նշանակությամբ օգտագործման անհնարինությունը, այն կարող է հաշվարկվել ժամանակի, ինչպես նաև չափման այլ միավորներով (կիլոմետրով, տարիներով և այլն).

պիտանիության ժամկետ՝ ժամանակահատված, որի ավարտից հետո ապրանքն իր նշանակությամբ օգտագործման համար պիտանի չէ.

երաշխիքային ժամկետ՝ ժամանակահատված, որի ընթացքում ապրանքի (աշխատանքի) թերության հայտնաբերման դեպքում արտադրողը (կա-

տարողը, վաճառողը) պարտավոր է բավարարել սույն օրենքով սահմանված սպառողի պահանջները:

ՀՈԴՎԱԾ 2. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Սպառողների իրավունքների պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

ՀՈԴՎԱԾ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

ՀՈԴՎԱԾ 4. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Սպառողների իրազեկման իրավունքն ապահովվում է կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական ու նորմատիվ փաստաթղթերում և հանրակրթական ու մասնագիտական ծրագրերում համապատասխան պահանջներ ընդգրկելով, ինչպես նաև սպառողների իրավունքների և այդ իրավունքների պաշտպանության անհրաժեշտ գործողությունների մասին տեղեկատվական համակարգերի կազմակերպման միջոցով:

ՀՈԴՎԱԾ 5. ԱՊՐԱՆՔԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ՈՐԱԿԸ

1. Վաճառողը (կատարողը) պարտավոր է ապառողին հանձնել ապրանք (կատարել աշխատանք, մատուցել ծառայություն), որի որակը համապատասխանում է պայմանագրին:

2. Պայմանագրում ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի վերաբերյալ պայմանների բացակայության դեպքում, վաճառողը (կատարողը) պարտավոր է ապառողին հանձնել այնպիսի ապրանք (կատարել աշխատանք, մատուցել ծառայություն), որը պիտանի է այն նպատակներին, որոնց համար նման ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) սովորաբար օգտագործվում է:

3. Եթե պայմանագիրը կնքելիս սպառողը վաճառողին (կատարողին) տեղյակ է պահել ապրանքի ձեռքբերման (աշխատանքի կատարման, ծառայության մատուցման) որոշակի նպատակների մասին, ապա վաճառողը (կատարողը) պարտավոր է ապա-

ռողին հանձնել այնպիսի ապրանք (կատարել աշխատանք, մատուցել ծառայություն), որը պիտանի է այդ նպատակներին համապատասխան օգտագործման համար:

4. Ապրանքն ըստ նմուշի և (կամ) նկարագրի վաճառելիս՝ վաճառողը պարտավոր է սպառողին հանձնել այնպիսի ապրանք, որը համապատասխանում է նմուշին և (կամ) նկարագրին:

5. Եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի նկատմամբ նորմատիվ փաստաթղթերով սահմանված են պարտադիր պահանջներ, ապա վաճառողը (կատարողը) պարտավոր է ապառողին հանձնել այդ պարտադիր պահանջներին համապատասխանող ապրանք (կատարել աշխատանք, մատուցել ծառայություն):

ՀՈԴՎԱԾ 6. ԱՐՏԱԴՐՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ, ՎԱՃԱՌՈՂԻ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊՐԱՆՔԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ) ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ, ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԵՐԱՇԽԻՋԱՅԻՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Արտադրողը (կատարողը) երկարատև օգտագործման համար նախատեսված ապրանքի (աշխատանքի) համար իրավունք ունի սահմանել այնպիսի ծառայության ժամկետ, որի ընթացքում պարտավորվում է ապահովել ապրանքը (աշխատանքը) իր նշանակությամբ օգտագործելու հնարավորությունը և պատասխանատվություն կրել իր մեղքով ծագած էական խախտումների համար:

2. Արտադրողը (կատարողը) պարտավոր է ծառայության ժամկետ սահմանել երկարատև օգտագործման այն ապրանքի (աշխատանքի), այդ թվում՝ կոմպլեկտավորման արտադրատեսակների (մանրակների, հանգույցների, ագրեգատների) համար, որոնք սահմանված ժամանակահատվածի ավարտից հետո կարող են վնաս պատճառել սպառողի կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին: Այդպիսի ապրանքների (աշխատանքների) անվանացանկը հաստատում է կառավարությունը:

3. Սննդամթերքի, օժանդակապակուսման և սպորտապրանքների, դեղորայքի, դեղամիջոցների, դեղանյութերի, կենցաղային քիմիայի ապրանքների և նման այլ ապրանքների համար արտադրողը պարտավոր է սահմանել այնպիսի պիտանիության ժամկետ, որի ավարտից հետո ապրանքն իր նշանակությամբ օգտագործման համար պիտանի չէ: Այդպիսի ապրանքների անվանացանկը հաստատում է կառավարությունը:

4. Արգելվում է ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը) սահմանված պիտանիության ժամկետի ավարտից հետո, ինչպես նաև այն ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը), որի համար պետք է սահմանված լինե՞ր ծառայության կամ պիտանիության ժամկետ, բայց չի սահմանվել:

5. Արտադրողը (կատարողը) իրավունք ունի սահմանել ապրանքի (աշխատանքի) համար երաշխիքային ժամկետ, որի ընթացքում ապրանքի (աշխատանքի) մեջ թերության հայտնաբերման դեպքում արտադրողը (կատարողը) պարտավոր է բավարարել սպառողի՝ սույն օրենքի 16-րդ և 27-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

6. Վաճառողն իրավունք ունի սահմանել ապրանքի համար արտադրողի կողմից սահմանված երաշխիքային ժամկետից ավելի երաշխիքային ժամկետ կամ, եթե արտադրողի կողմից երաշխիքային ժամկետ սահմանված չէ, վաճառողն իրավունք ունի սահմանել սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված ժամկետներից ավելի տևական երաշխիքային ժամկետ:

7. Վաճառողի սահմանած երաշխիքային ժամկետի ընթացքում ապրանքի թերության հայտնաբերման դեպքում սպառողն իրավունք ունի վաճառողին ներկայացնել պահանջներ, որոնց բավարարման կարգն ու ժամկետները, ինչպես նաև վաճառողի պատասխանատվությունը սահմանվում են սպառողի և վաճառողի միջև կնքված պայմանագրով:

ՀՈՒՎԱԾ 7. ԱՐՏԱԴՐՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊՐԱՆՔԻ ՆՈՐՈԳՍԱՆ ԵՎ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Արտադրողը պարտավոր է ապահովել ապրանքի օգտագործման հնարավորությունը դրա ծառայության ժամկետի ընթացքում: Այդ նպատակով արտադրողն ապահովում է ապրանքի նորոգումն ու տեխնիկական սպասարկումը, ինչպես նաև նորոգման և տեխնիկական սպասարկման համար անհրաժեշտ ծավալի ու տեսականու պահեստամասերի թողարկումն ու առաքումն առևտրական ու նորոգման կազմակերպություններ՝ ապրանքի արտադրման ժամկետի և այն արտադրությունից հանելուց հետո ապրանքի ծառայության ժամկետի ընթացքում, իսկ այդպիսի ժամկետի բացակայության դեպքում՝ ապրանքը սպառողին հանձնելու օրից սկսած՝ տասը տարվա ընթացքում:

ՀՈՒՎԱԾ 8. ՍՊԱՈՒՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊՐԱՆՔԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սպառողն իրավունք ունի պահանջել, որպեսզի ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) օգտագործման, պահման, փոխադրման և օգտահանման սովորական պայմաններում անվտանգ լինի իր կյանքի, առողջության և գույքի համար: Սպառողի կյանքի, առողջության և գույքի նկատմամբ ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգության ապահովման պահանջները պարտադիր են և սահմանվում են օրենքով նախատեսված կարգով:

2. Արտադրողը (կատարողը) պարտավոր է ապահովել ապրանքի (աշխատանքի) անվտանգությունը սահմանված ծառայության ժամկետի կամ ապրանքի (աշխատանքի) պիտանիության ժամկետի ընթացքում: Եթե սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ արտադրողը (կատարողը) երկարատև օգտագործման համար նախատեսված ապրանքի (աշխատանքի) համար չի սահմանել ծառայության ժամկետ, ապա նա պարտավոր է ապահովել ապրանքի (աշխատանքի) անվտանգությունը՝ ապրանքը (աշխատանքը) սպառողին հանձնելու օրից սկսած՝ տասը տարվա ընթացքում: Ապրանքի (աշխատանքի) անվտանգությունը չապահովելու հետևանքով սպառողի կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան:

3. Եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգ օգտագործման, նրա պահման, փոխադրման, օգտահանման համար անհրաժեշտ է պահպանել հատուկ կանոններ (այսուհետ՝ կանոններ), ապա արտադրողը (կատարողը) պարտավոր է դրանք նշել ապրանքի (աշխատանքի, ծառայության) պատկանելիք փաստաթղթերում, պիտակի վրա՝ մակնշվածքով կամ այլ եղանակով, իսկ վաճառողը (կատարողը) պարտավոր է այդ կանոնների մասին տեղեկացնել սպառողին:

4. Սպառողի կյանքի, առողջության և գույքի անվտանգությունն ապահովող պահանջները ենթակա են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխանության պարտադիր հավաստման:

5. Եթե պարզվել է, որ ապրանքի (աշխատանքի) օգտագործման, պահման կամ փոխադրման սահմանված կանոններն սպառողի կողմից պահպանելու դեպքում ապրանքը (աշխատանքը) վնաս է պատճառում կամ կարող է վնաս պատճառել սպառողի կյանքին, առողջությանը և գույքին, ապա արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է անհապաղ դադարեցնել դրա արտադրությունը (իրացումը) մինչև վնասի պատճառի վերացումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ միջոցներ ձեռնարկել այն շրջանառությունից անհապաղ հանելու և սպառողից, նրա համաձայնությամբ, հետ վերցնելու համար:

Եթե վնասի պատճառները հնարավոր չէ վերացնել, ապա արտադրողը (կատարողը) պարտավոր է այդպիսի ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) հանել արտադրությունից: Եթե արտադրողը (կատարողը) այդ պարտականությունը չի կատարում, ապա ապրանքի (աշխատանքի, ծառայության) արտադրությունից և շրջանառությունից հանումը կատարվում է այն իրավասու պետական մարմնի կարգադրագրով, որն իրականացնում է ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի և անվտանգության վերահսկողությունը: Ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) հետ վերցնելու հետ կապված՝ սպառողին պատճառված վնասները են-

թակա են հատուցման արտադրողի (կատարողի) կողմից՝ լրիվ չափով: Վաճառողի (կատարողի) կողմից սպառողների կյանքի, առողջության և գույքի համար վտանգ ներկայացնող ապրանքների իրացման (աշխատանքի կատարման) համար վաճառողը (կատարողը) պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 9. ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԱՐՏԱԳՐՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ, ՎԱՃԱՌՈՂԻ) ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Սպառողն իրավունք ունի պահանջել արտադրողի (կատարողի, վաճառողի), նրա աշխատանքային ռեժիմի և իրացվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որը արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է տրամադրել հայերեն լեզվով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված տեղեկատվությունը մատչելի ձևով ներկայացվում է սպառողներին ի գիտություն՝ առուվաճառքի պայմանագրերի միջոցով և սպառողների սպասարկման որոշակի ոլորտներում ընդունված ապրանքային պիտակների միջոցով և այլ եղանակներով, աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) պայմանագրերի կնքման ժամանակ:

(9-րդ հոդվածը փոփ. 14.12.04 ՀՕ-11-Ն օրենք)

ՀՈՂՎԱԾ 10. ԱՐՏԱԳՐՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ, ՎԱՃԱՌՈՂԻ) ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է սպառողին հայտնել իր կազմակերպության անվանումը (ֆիրմային անվանումը), գտնվելու վայրն ու աշխատանքային ռեժիմը: Արտադրողը (կատարողը, վաճառողը) այդ տեղեկատվությունը պետք է զետեղի ցուցանակի վրա: Ցուցանակին ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը: Արտադրողը (կատարողը, վաճառողը) պետք է նաև սպառողին ներկայացնի տեղեկատվություն՝ պետական գրանցման, ինչպես նաև, եթե արտադրողի (կատարողի, վաճառողի) գործունեության տեսակը (տեսակները) ենթակա է լիցենզավորման՝ լիցենզիայի համարի, դրա գործողության ժամկետի և այդ լիցենզիան տվող մարմնի մասին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված տեղեկատվությունը պետք է հասցվի սպառողներին ի գիտություն՝ նաև ժամանակավոր շինություններում, սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում՝ շրջիկ կետերի և շրջածախ առևտրի միջոցներով վաճառքի, սպառողների կենցաղային և այլ տիպի սպասարկումների իրակա-

նացման ժամանակ և այլ դեպքերում, եթե առևտուրը, սպառողների կենցաղային և այլ տիպի սպասարկումներն իրականացվում են վաճառողի (կատարողի) գտնվելու մշտական վայրից դուրս:

ՀՈՂՎԱԾ 11. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է ժամանակին սպառողին տրամադրել ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ անհրաժեշտ և ստույգ տեղեկատվություն, որն ապահովում է դրանց ճիշտ ընտրության հնարավորությունը: Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների տեղեկատվության բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվությունն սպառողին հասցնելու կարգը սահմանում է կառավարությունը:

2. Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ տեղեկատվությունը պարտադիր կարգով պետք է պարունակի՝

ա) այն նորմատիվ փաստաթղթերի նշագրերը, որոնց պարտադիր պահանջներին պետք է համապատասխանեն ապրանքները (աշխատանքները, ծառայությունները):

բ) տեղեկություններ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) հիմնական սպառողական հատկությունների մասին, իսկ սննդամթերքի համար՝ տեղեկություններ բաղադրության, կշռի և ծավալի, կալորիականության, դրանցում նորմատիվ փաստաթղթերի պարտադիր պահանջներով կանոնակարգվող առողջության համար վտանգավոր նյութերի պարունակության մասին, ինչպես նաև հիվանդությունների առանձին տեսակների դեպքում կիրառման հակացուցումներ: Այն ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անվանացանկը, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը պետք է պարունակի հիվանդությունների առանձին տեսակների դեպքում կիրառման հակացուցումներ, հաստատում է կառավարությունը:

գ) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գինը և ձեռքբերման պայմանները:

դ) երաշխիքային ժամկետը, եթե այն սահմանված է սույն օրենքին համապատասխան:

ե) ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) արդյունավետ և անվտանգ օգտագործման կանոնները և պայմանները:

զ) սույն օրենքին համապատասխան՝ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) սահմանված ծառայության կամ պիտակիության ժամկետը, ինչպես նաև նշված ժամկետների ավարտից հետո սպառողի անհրաժեշտ գործողությունների և այդպիսի գործողությունների չկատարման դեպքում՝ հնարավոր հետևանքների մասին տեղեկությունները, եթե ապրանքները (աշխատանքները)

նշված ժամկետների ավարտից հետո վտանգ են ներկայացնում սպառողի կյանքին, առողջությանը և գույքին կամ իր նշանակությամբ օգտագործման համար դառնում են ոչ պիտանի:

է) արտադրողի (կատարողի, վաճառողի) գտնվելու վայրը, այն կազմակերպության (կազմակերպությունների) գտնվելու վայրը, որը լիազորված է արտադրողի (վաճառողի) կողմից սպառողներից բողոքներ ընդունելու և ապրանքը (աշխատանքը) նորոգելու և տեխնիկական սպասարկում իրականացնելու համար:

ը) տեղեկատվություն՝ համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համապատասխանության հավաստման մասին:

թ) տեղեկատվություն՝ ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) կանոնների վերաբերյալ:

Եթե սպառողի ձեռք բերած ապրանքը եղել է գործածության մեջ կամ նրանում վերացվել է թերություն (թերություններ), ապա սպառողին պետք է այդ մասին տրվի տեղեկատվություն:

3. Սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը հասցվում է սպառողին ի գիտություն՝ ապրանքներին (աշխատանքներին, ծառայություններին) կցվող տեխնիկական փաստաթղթերով, պիտակների վրա, մականշվածքով կամ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների համար ընդունված այլ եղանակներով: Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համապատասխանության հավաստման մասին տեղեկատվությունն սպառողին ներկայացվում է սահմանված կարգով մականշված՝ համապատասխանության նշանի ձևով և տեխնիկական փաստաթղթերում համապատասխանության փաստը հավաստող նշումով (սերտիֆիկատի համարը, դրա գործողության ժամկետը, այն տվող մարմինը կամ համապատասխանության մասին հայտարարագրի համարը, գործողության ժամկետը, այն վավերացնող մարմինը):

4. Հայաստանի Հանրապետության տարածքում փաթեթավորված և չափաձևավորված սննդամթերքը պետք է ապահովված լինի դրա արտադրման տեղի մասին տեղեկատվությամբ:

ՀՈՂՎԱԾ 12. ՎԱՃԱՌՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ) ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

1. Առևտրի, սպառողների կենցաղային և սպասարկման այլ տեսակների ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերի աշխատակարգը սահմանվում է նրանց կողմից ինքնուրույնաբար, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

2. Վաճառողի (կատարողի) աշխատակարգի մասին տեղյակ է պահվում սպառողին:

ՀՈՂՎԱԾ 13. ԱՊՐԱՆՔԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ), ԱՐՏԱԴՐՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ, ՎԱՃԱՌՈՂԻ) ՄԱՍԻՆ ՈՉ ՊԱՏՇԱՆՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐ ԱՐՏԱԴՐՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ, ՎԱՃԱՌՈՂԻ) ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության), ինչպես նաև արտադրողի (կատարողի, վաճառողի) մասին ոչ պատշաճ, ոչ ստույգ և թերի տեղեկատվությունը հանգեցրել է՝

ա) սպառողին անհրաժեշտ հատկություններով չօժտված ապրանքի ձեռքբերմանը, ապա սպառողն իրավունք ունի լուծել պայմանագիրը և պահանջել վնասների լրիվ հատուցում: Այդ դեպքում սպառողը պարտավոր է արտադրողին (կատարողին, վաճառողին) վերադարձնել ապրանքը (կատարված աշխատանքը):

բ) ձեռք բերված ապրանքի (աշխատանքի, ծառայության) իր նշանակությամբ օգտագործման անհնարինությանը, ապա սպառողն իրավունք ունի պահանջել անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում հնարավոր կարճ ժամկետում: Եթե պայմանավորված ժամկետում տեղեկատվություն չի տրամադրվում, ապա սպառողն իրավունք ունի լուծել պայմանագիրը և պահանջել վնասների լրիվ հատուցում: Այդ դեպքում սպառողը պարտավոր է արտադրողին (կատարողին, վաճառողին) անհապաղ վերադարձնել ապրանքը (կատարված աշխատանքը):

գ) սպառողին հանձնելուց հետո ապրանքի (աշխատանքի) թերությունների առաջացմանը, ապա սպառողն իրավունք ունի սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-4-րդ կետերով նախատեսված պահանջները ներկայացնել վաճառողին (արտադրողին) կամ սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջները ներկայացնել կատարողին:

դ) սպառողի կյանքի, առողջության և գույքի վնասմանը, ապա սպառողն իրավունք ունի արտադրողից (կատարողից, վաճառողից) պահանջել վնասի հատուցում՝ սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված կարգով, ինչպես նաև պահանջել իր սեփականությունը հանդիսացող (տիրապետության տակ գտնվող) գույքին պատճառված վնասների լրիվ հատուցում:

2. Ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասին ոչ ստույգ կամ թերի տեղեկատվության հետևանքով պատճառված վնասների հատուցման վերաբերյալ սպառողների պահանջները քննարկելիս՝ անհրաժեշտ է ելնել ապրանքի (աշխատանքի, ծառայության) հատկությունների և բնութագրերի մասին սպառողի մասնագիտական գիտելիքների բացակայության ենթադրությունից:

ՀՈԴՎԱԾ 14. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՆՏԱՆ ՀԱՍԱՐ ՎԱՃԱՌՈՂԻ (ԱՐՏԱԴՐՈՂԻ, ԿԱՏԱՐՈՂԻ) ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Սպառողների իրավունքների խախտման համար վաճառողը (արտադրողը, կատարողը) կրում է օրենքով և (կամ) պայմանագրով նախատեսված պատասխանատվություն:

2. Սպառողին պատճառված վնասները ենթակա են հատուցման լրիվ չափով՝ չհաշված սույն օրենքով կամ պայմանագրով սահմանված տուժանքը (տուգանքը):

3. Տուժանքի (տուգանքի) վճարումը և վնասների հատուցումը վաճառողին (արտադրողին, կատարողին) չի ազատում սպառողի նկատմամբ բնեղենով պարտավորությունները կատարելու պարտականությունից:

4. Վաճառողը (արտադրողը, կատարողը) ազատվում է պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե ապացուցի, որ պարտավորությունների կատարումը կամ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի կամ սպառողի կողմից ապրանքի (աշխատանքի, ծառայության) օգտագործման, պահման և փոխադրման սահմանված կանոնների խախտման կամ երրորդ անձանց գործողությունների հետևանքով:

5. Սույն օրենքով կամ պայմանագրով նախատեսված տուժանքի (տուգանքի) վճարման մասին սպառողի պահանջները պետք է բավարարվեն վաճառողի (արտադրողի, կատարողի) կողմից՝ կամավոր կամ դատական կարգով:

ՀՈԴՎԱԾ 15. ԱՊՐԱՆՔԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՍԱՐ ԳՈՒՅՋԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Ապրանքի (աշխատանքի, ծառայության) կառուցվածքային, արտադրական, բաղադրագրային կամ այլ թերությունների հետևանքով սպառողի կյանքին, առողջությանը պատճառած վնասը ենթակա է հատուցման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունք վերապահվում է ցանկացած տուժողի՝ անկախ վաճառողի (կատարողի) հետ պայմանագրային հարաբերությունների մեջ նրա լինելու կամ չլինելու հանգամանքից:

3. Սպառողի կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման, եթե վնասը պատճառված է ապրանքի (աշխատանքի) սահմանված ծառայության կամ պիտանիության ժամկետի ընթացքում:

Եթե արտադրողի (կատարողի) կողմից ապրանքի

(աշխատանքի) համար սույն օրենքին համապատասխան պետք է սահմանվեր ծառայության կամ պիտանիության ժամկետ, բայց չի սահմանվել, կամ սպառողը, որին վաճառվել է ապրանք (կատարվել է աշխատանք), չի տեղեկացվել ծառայության կամ պիտանիության ժամկետի ավարտից հետո անհրաժեշտ գործողությունների և դրանց չկատարման պարագայում հնարավոր հետևանքների մասին, ապա վնասը ենթակա է հատուցման՝ անկախ այն պատճառելու ժամանակից:

Եթե արտադրողը (կատարողը) երկարատև օգտագործման համար նախատեսված ապրանքի (աշխատանքի) համար, սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, ծառայության ժամկետ չի սահմանել, ապա վնասը ենթակա է հատուցման՝ ապրանքը (աշխատանքը) սպառողին հանձնելու օրից սկսած, իսկ եթե հանձնելու օրը պարզել հնարավոր չէ, ապա ապրանքը արտադրելու (աշխատանքը ավարտելու) թվականից սկսած՝ տասը տարվա ընթացքում: Ապրանքի թերության հետևանքով պատճառված վնասը տուժողի ընտրությամբ ենթակա է հատուցման՝ վաճառողի կամ ապրանքն արտադրողի կողմից: Աշխատանքի կամ ծառայության թերությունների հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ կատարողի կողմից:

4. Արտադրողը (կատարողը) պատասխանատվություն է կրում ապրանքների արտադրության (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) համար անհրաժեշտ նյութերի, սարքավորումների, գործիքների և այլ միջոցների օգտագործման հետ կապված՝ սպառողի կյանքին, առողջությանը, գույքին պատճառած վնասի համար, անկախ այն բանից, թե գիտական և տեխնիկական գիտելիքների մակարդակը հնարավորություն տալիս է հայտնաբերել դրանց յուրահատուկ հատկությունները, թե՛ ոչ:

5. Արտադրողը (կատարողը, վաճառողը) ազատվում է պատասխանատվությունից՝ սույն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ II

ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

ՀՈԴՎԱԾ 16. ՈՉ ՊԱՏՇԱՐՈՒՄԻ ԱՊՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1. Սպառողը, որին վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք, և եթե վաճառողը դրա թերությունների մասին նախապայման չի սահմանել, իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել՝

ա) ապրանքի թերությունների անհատույց վերացում կամ սպառողի կողմից դրանց վերացման ծախսերի հատուցում:

բ) գնման գնի համաչափ իջեցում:

գ) նմանօրինակ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում:

դ) այլ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում՝ գնման գնի համապատասխան վերահաշվարկով:

ե) առուվաճառքի պայմանագրի լուծում: Այդ դեպքում սպառողը պարտավոր է վերադարձնել թերություններով ապրանքը: Սպառողն իրավունք ունի պահանջել ոչ պատշաճ որակի ապրանքի վաճառքի հետևանքով իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում: Վնասները հատուցվում են սպառողի համապատասխան պահանջների բավարարման համար սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կամ պայմանագրով սահմանված ժամկետներում:

Տեխնիկապես բարդ ապրանքների նկատմամբ սպառողի՝ սույն կետի «գ», «դ» և «ե» ենթակետերում նշված պահանջները ենթակա են բավարարման՝ ապրանքում էական խախտումների հայտնաբերման դեպքում: Այդպիսի ապրանքների անվանացանկը հաստատում է կառավարությունը: Այն ապրանքների նկատմամբ, որոնք սպառողը ձեռք է բերում կոմիսիոներից, սպառողի՝ սույն կետի «ա» և «գ» ենթակետերում նշված պահանջները ենթակա են բավարարման՝ վաճառողի (կոմիսիոների) համաձայնությամբ:

2. Սպառողը սույն հոդվածի 1-ին կետում նշված պահանջները ներկայացնում է վաճառողին (կոմիսիոներին):

3. Սպառողն իրավունք ունի սույն հոդվածի 1-ին կետի «ա» և «գ» ենթակետերում նշված պահանջները ներկայացնել արտադրողին կամ կոմիսիոներին: Այդ պահանջների ներկայացման փոխարեն սպառողն իրավունք ունի արտադրողին վերադարձնել ոչ պատշաճ որակի ապրանքը և հետ պահանջել դրա համար վճարված գումարը:

4. Սպառողի կողմից ոչ պատշաճ որակի ապրանքի ձեռքբերման դեպքում, որի համար սահմանված է պիտանիության ժամկետ, վաճառողը պարտավոր է այդ ապրանքը փոխարինել պատշաճ որակի ապրանքով կամ սպառողին վերադարձնել նրա վճարած գումարը, եթե ապրանքի թերությունները հայտնաբերվել են պիտանիության ժամկետի սահմաններում:

5. Սպառողի պահանջները քննարկվում են, եթե նա ներկայացնում է ապրանքային կամ դրամարկղային չեկ, իսկ այն ապրանքների նկատմամբ, որոնց համար սահմանված են երաշխիքային ժամկետներ, տեխնիկական տեղեկաթերթիկ կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ: Վաճառողը պարտավոր է սպառողին հանձնել ապրանքային չեկ կամ գնման փաստը հավաստող այլ փաստաթուղթ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է սպառողից ընդունել ոչ պատշաճ որակի ապրանքը, իսկ անհրաժեշտության դեպքում կատարել

ապրանքի որակի ստուգում: Սպառողն իրավունք ունի մասնակցել ապրանքի որակի ստուգմանը: Ապրանքի թերությունների առաջացման պատճառների վերաբերյալ վեճի դեպքում վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է ապրանքի փորձաքննությունը կատարել իր հաշվին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում: Սպառողն իրավունք ունի դատական կարգով վիճարկել այդպիսի փորձաքննության եզրակացությունը: Եթե ապրանքի փորձաքննությունից պարզվում է, որ թերություններն առաջացել են ապրանքն սպառողին հանձնելուց հետո նրա կողմից օգտագործման, պահման կամ փոխադրման սահմանված կանոնները խախտելու, կամ երրորդ անձանց գործողությունների, կամ անհաղթահարելի ուժի հետևանքով, ապա սպառողը պարտավոր է հատուցել վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոների փորձաքննության կատարման, ինչպես նաև դրա կատարման հետ կապված ապրանքի պահման ու փոխադրման ծախսերը: Վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է բավարարել սպառողի պահանջները, եթե չապացուցի, որ ապրանքի թերություններն առաջացել են այն սպառողին հանձնելուց հետո նրա կողմից ապրանքի օգտագործման, պահման կամ փոխադրման սահմանված կանոնները խախտելու, երրորդ անձի գործողությունների կամ անհաղթահարելի ուժի հետևանքով:

6. Նորոգման, գնի իջեցման, փոխարինման համար մեծածավալ ապրանքի և հինգ կիլոգրամից ավելի քաշով ապրանքի տեղ հասցնելը և դրանք սպառողին վերադարձնելն իրականացվում են վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոների ուժերով և հաշվին: Տվյալ պարտավորությունը չկատարելու, ինչպես նաև սպառողի գտնվելու վայրում վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոների բացակայության դեպքում նշված ապրանքների տեղ հասցնելը և վերադարձնելը կարող է իրականացնել սպառողը: Այդ դեպքում վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է հատուցել սպառողի՝ նշված ապրանքները տեղ հասցնելու և վերադարձնելու հետ կապված ծախսերը:

ՀՈՂՎԱԾ 17. ԱՊՐԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Սպառողն իրավունք ունի ներկայացնել սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված պահանջները, եթե դրանք հայտնաբերվել են արտադրողի՝ սույն օրենքի 6-րդ հոդվածին համապատասխան սահմանած երաշխիքային ժամկետի կամ պիտանիության ժամկետի ընթացքում, եթե այլ բան սահմանված չէ Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ պայմանագրով:

2. Այն ապրանքների նկատմամբ, որոնց համար

երաշխիքային ժամկետներ կամ պիտանիության ժամկետներ սահմանված չեն, սպառողն իրավունք ունի ներկայացնել նշված պահանջները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

3. Ապրանքի երաշխիքային, ինչպես նաև ծառայության ժամկետները հաշվարկվում են ապրանքն սպառողին հանձնելու օրից սկսած: Եթե հանձնման օրը հնարավոր չէ որոշել, այդ ժամկետները հաշվարկվում են ապրանքի արտադրման օրից սկսած: Սեզոնային ապրանքների համար (կոշիկ, հագուստ և այլն) այդ ժամկետները հաշվարկվում են համապատասխան սեզոնի սկսման պահից, որը որոշում է կառավարությունը:

Ապրանքները նմուշներով, փոստով վաճառելիս, ինչպես նաև այն դեպքերում, երբ առուվաճառքի պայմանագրի կնքման պահը և ապրանքն սպառողին հանձնելու պահը չեն համընկնում, այդ ժամկետները հաշվարկվում են ապրանքն սպառողին հասցնելու օրից սկսած, իսկ եթե ապրանքը կարիք ունի տեղակայման (միացման) կամ հավաքման՝ տեղակայման (միացման) կամ հավաքման օրից սկսած: Եթե ապրանքը տեղ հասցնելու, տեղակայման (միացման) կամ հավաքման օրը հնարավոր չէ որոշել, ապա այդ ժամկետները հաշվարկվում են առուվաճառքի պայմանագրի կնքման օրից սկսած:

Ապրանքի պիտանիության ժամկետը որոշվում է ապրանքի արտադրման օրից հաշվարկված այն ժամանակահատվածով, որի ընթացքում այն պիտանի է օգտագործման համար կամ այն թվականով, մինչև երբ ապրանքը պիտանի է օգտագործման համար: Ապրանքի պիտանիության ժամկետի տևողությունը պետք է համապատասխանի նորմատիվ փաստաթղթերով սահմանված ապրանքի անվտանգության պարտադիր պահանջներին:

4. Երաշխիքային ժամկետներ կարող են սահմանվել կոմպլեկտավորման արտադրատեսակների և հիմնական ապրանքի բաղկացուցիչ մասերի համար: Կոմպլեկտավորման արտադրատեսակների և բաղկացուցիչ մասերի երաշխիքային ժամկետները հաշվարկվում են նույն կարգով, ինչպես հիմնական ապրանքի երաշխիքային ժամկետը: Կոմպլեկտավորման արտադրատեսակների և հիմնական ապրանքի բաղկացուցիչ մասերի երաշխիքային ժամկետները չեն կարող հիմնական ապրանքի երաշխիքային ժամկետից պակաս լինել, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրում: Եթե պայմանագրով ապրանքի կոմպլեկտավորման արտադրատեսակների համար սահմանված է ավելի կարճ տևողությամբ երաշխիքային ժամկետ, քան հիմնական ապրանքի համար, սպառողն իրավունք ունի կոմպլեկտավորման արտադրատեսակների թերությունների հետ կապված պահանջները ներկայացնել հիմնական ապրանքի երաշխիքային ժամկետի ընթացքում:

Եթե կոմպլեկտավորման արտադրատեսակների համար սահմանված է ավելի տևական երաշխիքային ժամկետ, քան հիմնական ապրանքի երաշխի-

քային ժամկետն է, ապա սպառողն իրավունք ունի կոմպլեկտավորման ապրանքի թերությունների նկատմամբ պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են այդ արտադրատեսակի երաշխիքային ժամկետում՝ անկախ հիմնական ապրանքի երաշխիքային ժամկետը լրանալուց:

5. Սույն հոդվածում նշված ժամկետները հասցվում են սպառողին ի գիտություն՝ սույն օրենքի 11-րդ հոդվածին համապատասխան՝ ապրանքի մասին տեղեկատվությունում:

6. Արտադրողի մեղքով թույլ տրված ապրանքի էական խախտումների հայտնաբերման դեպքում սպառողն իրավունք ունի արտադրողին պահանջ ներկայացնել ապրանքի թերության անհատույց վերացման մասին՝ արտադրողի կողմից ապրանքի համար սահմանված երաշխիքային ժամկետի ավարտից կամ սույն հոդվածի 2-րդ կետում նշված ժամկետի ավարտից հետո: Նշված պահանջը կարող է ներկայացվել ապրանքի սահմանված ծառայության ժամկետի ընթացքում կամ ապրանքը հանձնելու օրից սկսած՝ տասը տարվա ընթացքում, եթե ապրանքի ծառայության ժամկետը սահմանված չէ: Եթե սպառողի կողմից այդպիսի պահանջի ներկայացման օրից սկսած՝ քսան օրվա ընթացքում, տվյալ պահանջը չի բավարարվում, ապա սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ արտադրողին ներկայացնել սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված այլ պահանջներ:

ՀՈՂՎԱԾ 18. ԱՊՐԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԱՐՏԱԴՐՈՂԻ (ՎԱՃԱՌՈՂԻ) ԿՈՂՄԻՑ

1. Ապրանքում հայտնաբերված թերությունները պետք է վերացվեն արտադրողի (վաճառողի) կամ կոմիսիոների կողմից՝ ապրանքի թերությունների վերացման վերաբերյալ սպառողի պահանջների ներկայացման օրից՝ քսան օրվա ընթացքում:

2. Արտադրողը (վաճառողը) կամ կոմիսիոները պարտավոր է երկարատև օգտագործման ապրանքների նկատմամբ սպառողի կողմից նշված պահանջները ներկայացնելուց հետո՝ նորոգման ընթացքում, յոթնօրյա ժամկետում սպառողին անհատույց տրամադրել մնացորինակ ապրանք՝ ապահովելով իր հաշվին տեղ հասցնելը: Երկարատև օգտագործման այն ապրանքների անվանացանկը, որոնց վրա նշված պահանջը չի տարածվում, հաստատում է կառավարությունը:

3. Ապրանքի թերությունների վերացման դեպքում երաշխիքային ժամկետը երկարաձգվում է այն ժամանակահատվածով, որի ընթացքում ապրանքը չի օգտագործվել: Նշված ժամանակահատվածը հաշվարկվում է ապրանքի թերության վերացման պահանջով՝ սպառողի դիմելու օրից մինչև նորոգումն ավարտելուց հետո այն վերադարձնելու օրը:

4. Ապրանքի թերությունները երաշխիքային ժամկետներ ունեցող կոմպլեկտավորման արտադրատեսակով կամ հիմնական ապրանքի բաղկացու-

ցիչ մասով փոխարինելու միջոցով վերացման դեպքում նոր կոմպլեկտավորման արտադրատեսակի կամ հիմնական ապրանքի բաղկացուցիչ մասի երաշխիքային ժամկետը հաշվարկվում է նորագումն ավարտելուց հետո՝ այդ ապրանքն սպառողին հանձնելու օրից սկսած:

ՀՈԳՎԱԾ 19. ՈՉ ՊԱՏՇԱՆՈՐԱԿԻ ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄԸ

1. Սպառողի կողմից ապրանքի թերությունների հայտնաբերման և այդպիսի ապրանքի փոխարինման պահանջ ներկայացնելու դեպքում վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է փոխարինել այդպիսի ապրանքը նշված պահանջի ներկայացման օրից՝ յոթնօրյա ժամկետում, իսկ վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոների կողմից այդպիսի ապրանքի որակի լրացուցիչ ստուգման անհրաժեշտության դեպքում՝ նշված պահանջի ներկայացման օրից՝ 20 օրվա ընթացքում:

Վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոների մոտ նշված պահանջի ներկայացման օրը փոխարինման համար անհրաժեշտ ապրանքի բացակայության դեպքում վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է փոխարինել այդպիսի ապրանքը՝ նշված պահանջի ներկայացման օրից՝ երկամսյա ժամկետում: Սպառողի պահանջով վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները պարտավոր է փոխարինման ընթացքում ժամանակավոր օգտագործման համար սպառողին անհատույց հանձնել երկարատև օգտագործման նմանօրինակ ապրանք՝ ապահովելով իր հաշվին տեղ հասցնելը: Այս կանոնը չի տարածվում այն ապրանքների վրա, որոնց անվանացանկը սահմանվում է սույն օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան: Ապրանքների սեզոնային ներկրման շրջանների համար ապրանքի փոխարինման սպառողի պահանջը ենթակա է բավարարման սպառողի դիմումով այն ժամկետում, որն անհրաժեշտ է այդ շրջաններ համապատասխան ապրանքը հերթական տեղ հասցնելու համար, եթե վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոները նշված պահանջի ներկայացման օրը չունի փոխարինման համար անհրաժեշտ ապրանքը:

2. Ոչ պատշաճ որակի ապրանքը պետք է փոխարինվի նոր ապրանքով, այսինքն՝ չօգտագործված ապրանքով: Ապրանքի փոխարինման դեպքում երաշխիքային ժամկետը հաշվարկվում է նորից՝ ապրանքն սպառողին հանձնելու օրից սկսած:

ՀՈԳՎԱԾ 20. ՍՊԱՌՈՂԻ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ապրանքի գնման գնի համաչափ իջեցման, սպառողի կողմից ապրանքի թերությունների վերացման ծախսերի հատուցման, ինչպես նաև առու-

վաճառքի պայմանագրի լուծման (ոչ պատշաճ որակի ապրանքն արտադրողին վերադարձնելու պայմանով) հետևանքով սպառողին հասցված վնասների հատուցման վերաբերյալ սպառողի պահանջները ենթակա են բավարարման վաճառողի (արտադրողի) կամ կոմիսիոների կողմից՝ համապատասխան պահանջի ներկայացման օրից՝ տասն օրվա ընթացքում:

ՀՈԳՎԱԾ 21. ՍՊԱՌՈՂԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԽԱՆՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՃԱՌՈՂԻ (ԱՐՏԱԴՐՈՂԻ) ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույն օրենքի 18-20-րդ հոդվածներով նախատեսված ժամկետների խախտման, ինչպես նաև նորոգման (փոխարինման) ընթացքում նմանօրինակ ապրանք տրամադրելու վերաբերյալ սպառողի պահանջը չկատարելու (կատարումն ուշացնելու) համար այդպիսի խախտումներ թույլ տված վաճառողը (արտադրողը) կամ կոմիսիոներն ուշացման յուրաքանչյուր օրվա համար սպառողին վճարում է տուժանք (տուգանք)՝ ապրանքի գնի 1 տոկոսի չափով:

2. Սպառողի պահանջները սույն օրենքի 18-20-րդ հոդվածներով նախատեսված ժամկետներում չկատարելու դեպքում սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ ներկայացնել սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված այլ պահանջներ:

ՀՈԳՎԱԾ 22. ՈՉ ՊԱՏՇԱՆՈՐԱԿԻ ԱՊՐԱՆՔԻ ՉԵՌԲԵՐՄԱՆ ԴԵՊՋՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

1. Ոչ պատշաճ որակի ապրանքը նմանօրինակ մակնիշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինելիս՝ վաճառողն իրավունք չունի պահանջել հատուցելու պայմանագրով նախատեսված ապրանքի գինը կամ ապրանքը փոխարինելու կամ դրա մասին դատարանի վճիռը կայացնելու պահին գոյություն ունեցող գնի տարբերությունը:

2. Ոչ պատշաճ որակի ապրանքն այլ մակնիշի (մոդելի, ապրանքատեսակի) նույնպիսի ապրանքով փոխարինելիս, եթե փոխարինման ենթակա ապրանքի գինն ավելի ցածր է, քան փոխարինման համար տրվող ապրանքի գինը, սպառողը պետք է վճարի գների տարբերությունը, իսկ այն դեպքում, երբ փոխարինման ենթակա ապրանքի գինն ավելի բարձր է, քան փոխարինման համար տրվող ապրանքի գինը, գների տարբերությունը վճարվում է սպառողին: Նշված հաշվարկներում փոխարինման ենթակա ապրանքի գնի բարձրացման դեպքում կիրառվում է սպառողի պահանջի ներկայացման օրվա առկա գինը, իսկ իջեցման դեպքում՝ այն սպառողի կողմից գնման օրվա գինը:

Եթե վաճառողն սպառողի պահանջը չի բավա-

րարում, ապա փոխարինվող և փոխարենը հանձնվող ապրանքի գինը որոշվում է ապրանքը փոխարինելու մասին դատարանի վճռի կայացման օրվա գներով:

3. Առուվաճառքի պայմանագիրը լուծելիս, կամ ոչ պատշաճ որակի ապրանքն արտադրողին վերադարձնելիս, կամ ապրանքի գնման գինը համաչափորեն իջեցնելու մասին սպառողի պահանջը բավարարելիս՝ հաշվի է առնվում ապրանքի գնի իջեցնելու մասին պահանջը ներկայացնելու, իսկ եթե սպառողի պահանջը կամավոր չի բավարարվել, գինը համաչափորեն իջեցնելու մասին դատարանի վճիռը կայացնելու օրվա գինը:

4. Վաճառողին ոչ պատշաճ որակի ապրանքը վերադարձնելիս՝ սպառողն իրավունք ունի պահանջել առուվաճառքի պայմանագրով սահմանված ապրանքի գնի և իր պահանջը կամովին բավարարելու օրվա դրությամբ գնի (իսկ եթե նրա պահանջը կամովին չի բավարարվել, ապա դատարանի վճիռը կայացնելու օրվա դրությամբ գնի) միջև տարբերությունը:

5. Այն սպառողներին, որոնց ապրանքը վաճառվել է ապառիկ, առուվաճառքի պայմանագիրը լուծելիս վերադարձվում է ապրանքի համար վճարված դրամական գումարը՝ ապառիկ ապրանքի վերադարձման օրվա մարման չափով, ինչպես նաև հատուցվում է ապառիկի տրամադրման վճարը:

ՀՈԳՎԱԾ 23. ՊԱՏՇԱՆ ՈՐԱԿԻ ԱՊՐԱՆՔԸ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄՊԱՍՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

1. Սպառողն իրավունք ունի փոխարինել անպատշաճ որակի ոչ պարենային ապրանքը նմանօրինակ ապրանքով այն վաճառողի մոտ, ումից ձեռք է բերել ապրանքը կամ վաճառողի կողմից հայտարարված այլ վայրում, եթե նշված ապրանքը հարմար չէ ձևով, եզրաչափերով, գույնով, չափով կամ այլ պատճառներով չի կարող օգտագործվել սպառողի կողմից իր նշանակությամբ, բացառությամբ կառավարության սահմանված անվանացանկով ապրանքների:

Սպառողն իրավունք ունի փոխարինել պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը 14 օրվա ընթացքում՝ չհաշված գնման օրը, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել: Պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինվում է, եթե նշված ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա ապրանքատեսքը, սպառողական հատկությունները, կապարակնիքները, ապրանքային պիտակները, ինչպես նաև վաճառված ապրանքի հետ սպառողին տրված ապրանքային կամ դրամարկղային չեկը:

2. Եթե սպառողի՝ վաճառողին դիմելու օրը վաճառքում նմանօրինակ ապրանքը բացակայում է, ապա սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ լուծել առուվաճառքի պայմանագիրն ու պահանջել հետ վերադարձնելու նշված ապրանքի համար

վճարված գումարը կամ փոխարինել այն նմանօրինակ ապրանքով՝ վաճառքում համապատասխան ապրանքի առաջին իսկ ստացման դեպքում: Վաճառողը պարտավոր է ոչ պարենային ապրանքի փոխարինումը պահանջող սպառողին հայտնել վաճառքում այդ ապրանքի ստացման մասին:

ՀՈԳՎԱԾ 24. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ապրանքների առանձին տեսակների առուվաճառքի կանոնները հաստատում է կառավարությունը:

(24-րդ հոդվածը խմբ. 06.11.02 ՀՕ-454-Ն օրենք)

ԳԼՈՒԽ III

ՄՊԱՍՏՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ) ԴԵՊՐՈՒՄ

ՀՈԳՎԱԾ 25. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ) ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Կատարողը պարտավոր է իրականացնել աշխատանքի կատարումը (ծառայության մատուցումը) առանձին տեսակների աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) կանոններով կամ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) պայմանագրով սահմանված ժամկետում: Աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) պայմանագրում կարող է նախատեսվել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ժամկետ (եթե այն նախատեսված չէ նշված կանոններով), ինչպես նաև նշված կանոններով սահմանված ժամկետից ավելի փոքր տևողությամբ ժամկետ: Նշված կանոնները հանդիսանում են կողմերի միջև կնքված պայմանագրի անբաժանելի մաս:

2. Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ժամկետը կարող է որոշվել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ավարտի թվականով (ժամանակահատվածով), և (կամ) աշխատանքի կատարմանը (ծառայության մատուցմանը) ձեռնամուխ լինելու թվականով (ժամանակահատվածով): Այն դեպքում, երբ աշխատանքի կատարումը (ծառայության մատուցումը) աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում իրականացվում է մաս առ մաս (պարբերական մամուլի տեղ հասցնելը, տեխնիկական սպասարկումը), պետք է նախատեսվեն աշխա-

տանքների կատարման (ծառայության մատուցման) մասնավոր ժամկետներ (ժամանակահատվածներ):

**ՀՈԴՎԱԾ 26. ԿԱՏԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
(ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ)
ԺԱՍԿԵՏՆԵՐԻ ԽԱՆՏՄԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

1. Եթե կատարողը ժամանակին ձեռնամուխ չի եղել աշխատանքի կատարմանը (ծառայության մատուցմանը) կամ, եթե աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ժամանակ ակնհայտ է դառնում, որ աշխատանքի կատարումը (ծառայության մատուցումը) ժամանակին չի կարող իրականանալ, ինչպես նաև աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ժամկետի ուշացման դեպքում սպառողն իրավունք ունի հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել հատուցելու վնասները: Եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու, ապա սպառողն իրավունք ունի ողջամիտ ժամկետ նշանակել կատարողի կողմից աշխատանքի թերությունները վերացնելու համար և այդ ժամկետում թերությունները չվերացնելու դեպքում հրաժարվել պայմանագրից կամ աշխատանքի թերությունների վերացնելը կատարողի հաշվին հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները: Վնասները հատուցվում են սպառողի համապատասխան պահանջների բավարարման համար սահմանված ժամկետներում:

2. Սպառողի նշանակած նոր ժամկետները, որոնց ընթացքում կատարողը պետք է ձեռնամուխ լինի աշխատանքի կատարմանը (ծառայության մատուցմանը) և ավարտի աշխատանքի կատարումը (ծառայության մատուցումը), նշվում են աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագրում: Նոր ժամկետների խախտման դեպքում սպառողն իրավունք ունի կատարողին ներկայացնել սույն հոդվածի 1-ին կետով սահմանված այլ պահանջներ:

3. Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագրի լուծման դեպքում սպառողին վերադարձված կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) գինը, ինչպես նաև կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) գնի նվազեցման ժամանակ հաշվի առնված գինը որոշվում է սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

4. Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագրի լուծման դեպքում, եթե կատարողը ժամանակին ձեռնամուխ չի եղել աշխատանքի կատարմանը (ծառայության մատուցմանը) կամ այն իրականացնում է այնքան դանդաղ, որ աշխատանքի կատարումը (ծառայության մատուցումը) նշանակված ժամկետում դառնում է

անհնար, կատարողն իրավունք չունի պահանջել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գործընթացում իր ծախսերի հատուցում, ինչպես նաև վարձատրություն՝ արդեն կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) համար: Այդպիսի դեպքերում սպառողի և կատարողի միջև հաշվարկների կարգի առանձնահատկությունները կարող են սահմանվել առանձին տեսակների աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) կանոններով:

5. Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) սկզբի և ավարտի սահմանված ժամկետների կամ սույն հոդվածի 1-ին կետի հիման վրա սպառողի նշանակած նոր ժամկետների խախտման դեպքում կատարողն սպառողին վճարում է տուժանք (տուգանք) ուշացման յուրաքանչյուր օրվա (ժամի, եթե ժամկետը որոշված է ժամերով) համար՝ աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գնի երեք տոկոսի չափով, իսկ եթե աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գինն ըստ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) պայմանագրի որոշված չէ, պատվերի ընդհանուր գնի երեք տոկոսի չափով: Աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) պայմանագրով սպառողի և կատարողի միջև կարող է սահմանվել տուժանքի (տուգանքի) ավելի բարձր չափ: Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) սկզբի ժամկետների խախտման համար տուժանքը (տուգանքը) գանձվում է ուշացման յուրաքանչյուր օրվա (ժամի, եթե ժամկետը որոշված է ժամերով) համար՝ ընդհուպ մինչև աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) սկիզբը կամ սպառողի կողմից սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջների ներկայացումը:

Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ավարտման ժամկետների խախտման համար տուժանքը (տուգանքը) գանձվում է ուշացման յուրաքանչյուր օրվա (ժամի, եթե ժամկետը որոշված է ժամերով) համար՝ ընդհուպ մինչև աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ավարտը կամ սպառողի կողմից սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված պահանջների ներկայացումը:

Սպառողի օգտին գանձվող տուժանքի (տուգանքի) գումարը չի կարող գերազանցել առանձին տեսակի աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գումարը կամ պատվերի ընդհանուր գինը, եթե առանձին տեսակի աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գինը որոշված չէ աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագրով: Տուժանքի (տուգանքի) չափը որոշվում է՝ ելնելով աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գնից, իսկ եթե նշված գինը չի որոշված, այն վայրում պատվերի գոյություն ունեցող ընդհանուր գնից, որտեղ սպառողի պահանջը պետք է բավարարված լիներ կատարողի այդպիսի պահանջի կամավոր բավա-

բարման օրը կամ, եթե սպառողի պահանջը կամավոր ձևով բավարարված չի եղել՝ դատական որոշման կայացման օրը:

6. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված սպառողի պահանջները ենթակա չեն բավարարման, եթե կատարողն ապացուցի, որ աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ժամկետի խախտումը տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի հետևանքով կամ սպառողի մեղքով:

ՀՈԳՎԱԾ 27. ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ (ՍԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

1. Կատարված աշխատանքում (մատուցված ծառայությունում) թերությունների հայտնաբերման դեպքում սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել՝

ա) կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) թերությունների անհատույց վերացում.

բ) աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գնի համապատասխան իջեցում.

գ) համանման նյութից նույն որակով մեկ այլ իրի անհատույց պատրաստում կամ կրկնական աշխատանքի կատարում: Ընդ որում, սպառողը պարտավոր է վերադարձնել կատարողի կողմից նրան նախօրոք տրված իրը.

դ) կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) թերությունների՝ իր ուժերով վերացման ծախսերի հատուցում:

Թերությունների անհատույց վերացման, այլ իրի պատրաստման կամ կրկնական աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) մասին սպառողի պահանջները կարող են ուղեկցվել կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) գնի իջեցման մասին պահանջով: Սպառողն իրավունք ունի լուծել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագիրն ու պահանջել վնասների լրիվ հատուցում, եթե նշված պայմանագրով սահմանված ժամկետում կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) թերությունները կատարողը չի վերացրել: Սպառողը նաև իրավունք ունի լուծել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագիրը, եթե նա կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) մեջ հայտնաբերել է էական խախտումներ կամ պայմանագրի պայմաններից այլ էական շեղումներ:

Սպառողն իրավունք ունի պահանջել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) թերությունների հետ կապված իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում: Վնասները հատուցվում են սպառողի համապատասխան պահանջների բավարարման համար սահմանված ժամկետներում:

2. Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագրի լուծման դեպքում

սպառողին վերադարձված կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) գինը, ինչպես նաև աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գնի իջեցման ժամանակ հաշվի առնված գինը որոշվում է սույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

3. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված պահանջները կարող են ներկայացվել կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) ընդունման ժամանակ թերությունների հայտնաբերման դեպքում կամ աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ընթացքում, իսկ աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ընդունման ժամանակ թերությունների հայտնաբերման անհնարինության դեպքում՝ երաշխիքային ժամկետի ընթացքում, կամ երաշխիքային ժամկետի բացակայության դեպքում՝ կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) ընդունման օրից սկսած՝ 6 ամսվա ընթացքում:

4. Կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) կատարողի մեղքով թույլ տրված էական խախտումների բացահայտման դեպքում սպառողն իրավունք ունի կատարողին ներկայացնել կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) թերությունների անհատույց վերացման մասին պահանջ՝ աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) համար կատարողի սահմանած երաշխիքային ժամկետի ավարտից կամ սույն հոդվածի 3-րդ կետում նշված ժամկետների ավարտից հետո: Սպառողի նշված պահանջը կարող է ներկայացված լինել կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) սահմանված ծառայության ժամկետի ընթացքում կամ կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) ընդունման օրից՝ 10 տարվա ընթացքում, եթե կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) ծառայության ժամկետ սահմանված չէ: Եթե տվյալ պահանջը սույն օրենքի 28-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի բավարարվում, ապա սպառողն իր ընտրությամբ իրավունք ունի պահանջել՝

ա) աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գնի համապատասխան իջեցում.

բ) կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) թերությունների՝ իր ուժերով վերացման ծախսերի հատուցում.

գ) աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագրի լուծում և վնասների հատուցում:

ՀՈԳՎԱԾ 28. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ (ՍԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) ընթացքում հայտնաբերված կատար-

ված աշխատանքի (մատուցված ծառայության) թերությունները պետք է վերացվեն սպառողի կողմից նշանակված ընդունելի ժամկետում: Կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) թերությունները պետք է վերացվեն սպառողի ներկայացրած պահանջի օրից՝ 20 օրվա ընթացքում, եթե կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) ընդունման ժամանակ պայմանագրով (կողմերի համաձայնագրով) կամ աշխատանքների առանձին տեսակների կատարման (ծառայությունների մատուցման) կանոններով ավելի կարճատև ժամկետ սահմանված չէ:

Սպառողի կողմից նշանակված կամ պայմանագրով (կողմերի համաձայնագրով) սահմանված թերությունների վերացման ժամկետը նշվում է պայմանագրում կամ այլ փաստաթղթում: Սույն հոդվածով նախատեսված՝ կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) թերությունների վերացման ժամկետների խախտման դեպքում կատարողն ուշացման յուրաքանչյուր օրվա համար սպառողին վճարում է տուժանք (տուգանք), որի չափը և հաշվարկման կարգը որոշվում են սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան: Նշված ժամկետների խախտման դեպքում սպառողն իրավունք ունի կատարողին ներկայացնել սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված այլ պահանջներ:

ՀՈՂՎԱԾ 29. ՍՊԱՌՈՂԻ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԺԱՍԿԵՏՆԵՐԸ

1. Աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) գնի իջեցման, կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) թերություններն իր ուժերով վերացման ծախսերի հատուցման, ինչպես նաև սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով և 27-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված աշխատանքների կատարման (ծառայության մատուցման) պայմանագրի լուծմամբ պատճառված վնասների հատուցման մասին սպառողի պահանջները ենթակա են բավարարման՝ համապատասխան պահանջի ներկայացման օրից՝ տասնօրյա ժամկետում:

2. Համանման նյութից նույն որակի այլ իրի անհատույց պատրաստման կամ կրկնական աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) վերաբերյալ սպառողի պահանջները ենթակա են բավարարման այնպիսի ժամկետում, որը սահմանված է աշխատանքի արագ կատարման (ծառայության մատուցման) համար, իսկ եթե նման ժամկետ սահմանված չէ՝ ոչ պատշաճ իրականացվող աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) համար պայմանագրով նախատեսված ժամկետում:

3. Սպառողի՝ սույն հոդվածով նախատեսված

առանձին պահանջների բավարարման ժամկետների խախտման դեպքում կատարողն ուշացման յուրաքանչյուր օրվա համար սպառողին վճարում է տուժանք (տուգանք), որի չափը և հաշվարկման կարգը որոշվում են սույն օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան: Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերում նշված ժամկետների խախտման դեպքում սպառողն իրավունք ունի կատարողին ներկայացնել սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին կետով և 27-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով նախատեսված այլ պահանջներ:

ՀՈՂՎԱԾ 30. ՍՊԱՌՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ) ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սպառողն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագիրը՝ կատարողին վճարելով գնի այն մասը, որը համարժեք է մինչև նշված պայմանագրի լուծման մասին ծանուցում ստանալը կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) գնին: Սպառողը պարտավոր է կատարողին հատուցել նաև աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագրի լուծման հետևանքով պատճառված վնասները՝ նշված պայմանագրի լուծման մասին ծանուցում ստանալուց առաջ կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) համար վճարված գնի և կատարվող ամբողջ աշխատանքի (մատուցվող ծառայության) գնի միջև եղած տարբերության սահմաններում:

ՀՈՂՎԱԾ 31. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ) ՀԱՄԱՐ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ

1. Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) համար կարող է կազմվել հաստատուն կամ մոտավոր նախահաշիվ: Այդպիսի նախահաշվի կազմումը սպառողի կամ կատարողի պահանջով պարտադիր է:

2. Կատարողն իրավունք չունի պահանջել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) վարձատրում և հաստատուն նախահաշվի մեջ չներառված լրացուցիչ ծախսեր, եթե սպառողն այդպիսի աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) համաձայնություն չի տվել կամ կատարողին չի հանձնարարել այդպիսի աշխատանքի կատարում (ծառայության մատուցում): Մոտավոր նախահաշիվը գերազանցելու անհրաժեշտության դեպքում կատարողը պարտավոր է անհապաղ դրա մասին նախազգուշացնել սպառողին: Այդ դեպքում սպառողն իրավունք ունի հրաժարվել աշխատանքի կատարման (ծառայության

մատուցման) պայմանագրի կատարումից՝ կատարողին հատուցելով կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) համար նրա կողմից արված ծախսերը՝ համաձայն սկզբնական նախահաշվի: Եթե կատարողն սպառողին չի նախագուշացրել մոտավոր նախահաշվի գերազանցման մասին, ապա նա պարտավոր է աշխատանքը կատարել (ծառայությունը մատուցել) սկզբնական մոտավոր նախահաշվի սահմաններում:

ՀՈՂՎԱԾ 32. ԿԱՏԱՐՈՂԻ ՆՅՈՒԹՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. Կատարողը պարտավոր է աշխատանքի կատարման պայմանագրով որոշված աշխատանքը կատարել իր նյութով և իր միջոցներով, եթե սպառողը չի պահանջում աշխատանքի կատարումն իր նյութով: Իր նյութով աշխատանք կատարողը պատասխանատվություն է կրում այդ նյութի պատշաճ որակի համար:

2. Պայմանագրի կնքման ժամանակ կատարողի նյութի համար սպառողը վճարում է ամբողջությամբ կամ այն չափով, որը նշված է աշխատանքների առանձին տեսակների կատարման կանոններում կամ աշխատանքի կատարման պայմանագրում՝ կատարողից ստացած աշխատանքի վերջնական հաշվարկի պայմանով, եթե կողմերի համաձայնությամբ կատարողի նյութի համար հաշվարկների այլ կարգ նախատեսված չէ:

3. Աշխատանքի կատարման նշված կանոններով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում նյութը կարող է կատարողի կողմից սպառողին տրամադրվել ապառիկ՝ ներառյալ սպառողի կողմից նյութի համար տարածամկետ վճարելու պայմանով: Կատարողի՝ ապառիկ տրամադրած նյութի գնի հետագա փոփոխությունը չի հանգեցնում վերահաշվարկի:

4. Կատարողի նյութերը և աշխատանքի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները, գործիքները և այլն աշխատանքի կատարման վայր է հասցնում կատարողը:

ՀՈՂՎԱԾ 33. ՍՊԱՌՈՂԻ ՆՅՈՒԹՈՎ (ԻՐՈՎ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

1. Եթե աշխատանքն ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվում է սպառողի նյութով (իրով), կատարողը պատասխանատու է այդ նյութի (իրի) պահպանման և դրա ճիշտ օգտագործման համար:

Կատարողը պարտավոր է՝

ա) նախագուշացնել սպառողին նրա տված նյութի (իրի) ոչ պիտանի լինելու կամ անորակության մասին.

բ) ներկայացնել հաշվետվություն նյութի ծախսի

մասին և վերադարձնել դրա մնացորդը:

Սպառողից ընդունված նյութի (իրի) լրիվ կամ մասնակի կորստի (վնասվելու) դեպքում կատարողը պարտավոր է եռօրյա ժամկետում այն փոխարինել նման որակի համանման նյութով (իրով) և սպառողի ցանկությամբ համանման նյութից (իրից) պատրաստել արտադրատեսակ՝ ընդունելի ժամկետներում, իսկ նման որակի համանման նյութի (իրի) բացակայության դեպքում սպառողին հատուցել կորցրած (վնասված) նյութի (իրի) կրկնակի արժեքը, ինչպես նաև սպառողի կատարած ծախսերը:

2. Կորցրած (վնասված) նյութի (իրի) գինը որոշվում է՝ ելնելով այն վայրում գոյություն ունեցող նյութի (իրի) գնից, որտեղ սպառողի պահանջը պետք է բավարարված լիներ կատարողի կողմից այդպիսի պահանջի կամավոր բավարարման օրը կամ, եթե սպառողի պահանջը չի բավարարվել կամավոր, դատական որոշման կայացման օրը:

Կատարողին փոխանցվող նյութի (իրի) գինը որոշում է սպառողը, և դա նշվում է աշխատանքի կատարման պայմանագրում կամ այն փաստաթղթում (անդորրագրում, պատվերում), որը հավաստում է պայմանագրի կնքված լինելը:

3. Կատարողն ազատվում է սպառողից ընդունած նյութի լրիվ կամ մասնակի կորստի (վնասի) համար պատասխանատվությունից, եթե կատարողն սպառողին նախագուշացրել է նյութի (իրի) հատուկ հատկությունների մասին, որոնք կարող են հանգեցնել դրա լրիվ կամ մասնակի կորստի (վնասի): Նյութի (իրի) հատուկ հատկությունների մասին չիմանալը կատարողին չի ազատում պատասխանատվությունից:

ՀՈՂՎԱԾ 34. ԿԱՏԱՐՈՂԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎՈՂ

ԱՇԽԱՏԱՆՔԻ (ՄԱՏՈՒՅՎՈՂ

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ՈՐԱԿԻ ՎՐԱ ԱՉԳՈՂ

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՍՊԱՌՈՂԻՆ

ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կատարողը պարտավոր է ժամանակին տեղեկացնել սպառողին այն մասին, որ սպառողի ցուցումների պահպանումը և սպառողից կախված այլ հանգամանքները կարող են վատացնել կատարվող աշխատանքի (մատուցվող ծառայության) որակը: Եթե սպառողը, չնայած կատարողի ժամանակին և հիմնավորված տեղեկացմանը, ողջամիտ ժամկետում չի փոխում ոչ պիտանի կամ անորակ նյութը, չի փոխում աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) եղանակի մասին ցուցումները կամ չի վերացնում կատարվող աշխատանքի (մատուցվող ծառայության) որակը վատացնող այլ հանգամանքները, ապա կատարողն իրավունք ունի լուծել աշխատանքի կատարման (ծառայության մատուցման) պայմանագիրը և սպառողից պահանջել վնասների լրիվ հատուցում:

ՀՈԴՎԱԾ 35. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ (ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ) ՀԱՍԱՐ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԿԱՐԳԸ

Կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) համար հաշվարկների կարգը որոշվում է սպառողի և կատարողի միջև կնքված պայմանագրով: Սպառողը պարտավոր է վճարել կատարողի կողմից ամբողջ ծավալով կատարված աշխատանքի (մատուցված ծառայության) համար դրավարտից հետո, եթե այլ բան նախատեսված չէ սպառողի և կատարողի միջև կնքված պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

ՀՈԴՎԱԾ 36. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ) ԿԱՆՈՆՆԵՐԸ

Սպառողների կենցաղային և այլ տեսակի սպասարկումների (աշխատանքների առանձին տեսակների կատարման ու ծառայությունների առանձին տեսակների մատուցման) կանոնները հաստատում է կառավարությունը, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

(36-րդ հոդվածը խմբ. 06.11.02 ՀՕ-454-Ն օրենք)

ՀՈԴՎԱԾ 37. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԽԱՆՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԳՎԱՌՈՒՄԸ

Ծառայությունների առանձին տեսակների մատուցման վերաբերյալ պայմանագրերի պայմանների խախտման հետևանքները, եթե այդպիսի պայմանագրերն իրենց բնույթով չեն ընկնում սույն գլխի գործողության տակ, որոշվում են այլ օրենքներով:

ԳԼՈՒԽ IV

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈԴՎԱԾ 38. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՈՐԱԿԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) անվտանգության ապահովման նպատակով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) որակի և անվտանգության պահանջների վերահսկողությունն իրականացնում են լիազորված մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

յությունների) որակի և անվտանգության պահանջների վերահսկողությունն իրականացնում են լիազորված պետական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված՝ իրենց իրավասության սահմաններում:

ՀՈԴՎԱԾ 39. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՈՐԱԿԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) որակի և անվտանգության պահանջների վերահսկողությունն իրականացնող պետական լիազորված մարմինները Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված իրենց իրավասության սահմաններում իրավունք ունեն կիրառել պատասխանատվության միջոցներ:

ՀՈԴՎԱԾ 40. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Սպառողների իրավունքների պաշտպանությունը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 41. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Սպառողների իրավունքների պաշտպանությունն սպառողների հասարակական միավորումների կողմից իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 42. ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՆՈՐՈՇ ՇՐՋԱՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սպառողների անորոշ շրջանակի նկատմամբ վաճառողների (արտադրողների, կատարողների) կամ կոմիսիոներների գործողությունները հակաիրավական ճանաչելու և դրանք դադարեցնելու մասին կարող են հայցեր ներկայացնել դատարան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անձինք:

ՀՈԴՎԱԾ 43. ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 1-ից:

20 հուլիսի 2001 թ.

ԱՐՏԱԴՐՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ, ՎԱՃԱՌՈՂԻ) ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՊՐԱՆՔԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ), ԱՐՏԱԴՐՈՂԻ (ԿԱՏԱՐՈՂԻ, ՎԱՃԱՌՈՂԻ) ՄԱՍԻՆ ՈՉ ՊԱՏՇԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է սպառողին տրամադրել պատշաճ, հավաստի և ճշգրիտ տեղեկատվություն ապրանքի (աշխատանքի, ծառայության), արտադրողի (կատարողի, վաճառողի) վերաբերյալ:

Պատշաճ, հավաստի և ճշգրիտ տեղեկատվության տրամադրում ասելով՝ հասկանում ենք «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով պահանջվող ողջ տեղեկատվության տրամադրումը: Նշված տեղեկատվության տրամադրման կարևորությունն արտահայտվում է այդ մասով իրավախախտման համար օրենքով սահմանված պատասխանատվությամբ, որն արտադրող (կատարող, վաճառող) կազմակերպության քաղաքացիաիրավական պատասխանատվությունն է: Կազմակերպության պատասխանատու անձանց պատասխանատվությունը համապատասխան խախտումների համար կարգավորվում է աշխատանքային, վարչական և քրեական օրենսդրությամբ: Պատասխանատվության միջոցները, կախված վտանգավոր հետևանքների առաջացման բնույթից, սահմանված են դիֆերենցված (անջատ):

Ի՞նչ է ոչ լրիվ և ոչ հավաստի տեղեկատվությունը:

Ոչ լրիվ տեղեկատվությունն օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով պահանջվող տեղեկատվության ցանկից որևէ մասով կամ կետով արտահայտված տեղեկատվության բացակայությունն է:

Ոչ հավաստի տեղեկատվությունը տրամադրված տեղեկատվության անհամապատասխանությունն է ապրանքի (աշխատանքի, ծառայության) փաստացի տվյալների, ցուցանիշների և այլ հատկությունների հետ: Այս պարագայում պատասխանատվության կիրառման համար անհրաժեշտ է որոշել տրամադրված ոչ պատշաճ տեղեկատվության կամ ոչ լրիվ տրամադրված տեղեկատվության և հետևանքների միջև պատճառահետևանքային կապը, ինչը սահմանված է օրենքի 13-րդ հոդվածով:

Սպառողին անհրաժեշտ հատկություններով չօժտված ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) սպառողի՝ կիրառման որոշակի պահանջներին չբավարարող, ըստ նշանակության չկիրառվող, պայմաններին չհամապատասխանող ապրանքն (աշխատանքը, ծառայությունը) է: Խոսքը պատշաճ որակի ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասին է: Օրինակ՝ սպառողն իրեն տրամադրված թերի տեղեկատվության պատճառով ձեռք է բերել հոսանքի այլ լարման համար նախատեսված էլեկտրասարք, որն անհրաժեշտ չէ տվյալ սպառողին: Եթե սպառողը տիրապետի ապրանքի մասին հավաստի և լրիվ տեղեկատվությանը, ապա տվյալ սարքն առհասարակ չի գնի: Այս պարագայում նա իրավասու է լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իր կրած բոլոր

վնասները:

Այս դեպքում մենք, իրավաբանորեն, գործ ունենք պայմանագրի առարկայի նկատմամբ սպառողին վավերացված պայմանագրի երկրորդ կողմի միջոցով մոլորության մեջ գցելու փաստի հետ: Պայմանագրի լուծումը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հնարավոր է կողմերի համաձայնությամբ, դատարանի որոշմամբ կամ միակողմանի, եթե վերջինը թույլատրվում է օրենքով կամ պայմանագրով: Այս դեպքում օրենքն սպառողին հնարավորություն է տալիս միակողմանի լուծելու պայմանագիրը: Պայմանագիրը համարվում է լուծված վաճառողի (կատարողի) կողմից սպառողի հիմնավորված դիմումի ստացման և ապրանքի վերադարձման օրից: Վաճառողի (կատարողի) կողմից սպառողի հիմնավորված պատճառաբանությամբ ապրանքի հետ չվերցնելը կգնահատվի որպես վերջինիս իրավունքների խախտում:

Ապրանքի (աշխատանքի, ծառայության) ըստ նշանակության օգտագործման անհնարինությունը կարող է առաջանալ տարբեր պատճառներից: «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ըստ նշանակության օգտագործման անհնարինության պատճառ կարող է դառնալ ոչ պատշաճ և ոչ հավաստի տեղեկատվության տրամադրումը: Դրա պատճառով սպառողը զրկվում է գնած ապրանքն օգտագործելու, նորոգելու հնարավորությունից, քանի որ տեղեկատվության մեջ բացակայում են, օրինակ, տեխնիկական սպասարկում և նորոգում կատարող կազմակերպության մասին տվյալները: Պատշաճ տեղեկատվության տրամադրման ժամկետներն ինքնուրույն որոշում է սպառողը և վաճառողին (կատարողին) դրանք ներկայացնում է գրավոր:

Ապրանքի թերությունները կարող են առաջանալ ապրանքի նախագծման, արտադրման, տեղափոխման, պահման և այլ դեպքերում մինչև սպառողին հանձնելը և նույն պատճառներով՝ սպառողին հանձնելուց հետո: Տվյալ դեպքում խոսքը որակյալ ապրանքի մասին է, որի թերություններն առաջացել են ապրանքի տեղափոխման, օգտագործման, սպառողի մոտ պահման պայմանների մասին տրամադրված թերի և ոչ պատշաճ տեղեկատվության պատճառով:

Արտադրողը (կատարողը, վաճառողը) չի կարող ազատվել պատասխանատվությունից, եթե անգամ թերության ի հայտ գալն ուղղակի կապված է սպառողի գործողությունների հետ: Այս դեպքում սպառողի մեղքը բացակայում է և հակառակը՝ առկա է արտադրող (կատարող, վաճառող) կազմակերպության մեղքը, քանզի տվյալ կազմակերպությունը պատասխա-

նատու է ոչ հավաստի և ոչ լրիվ տեղեկատվության տրամադրման համար: Նշված պատճառներով թերության ի հայտ գալու հետևանքներն այնպիսին են, ինչպիսին էին թերություններով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ժամանակ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորված է դիտարկվող հարցը: Օրենսգրքը գնորդի վրա է դնում անհրաժեշտ տեղեկատվության բացակայության և ծագած թերության պատճառահետևանքային կապի ապացուցումը:

Ապրանքի մասին ոչ ճիշտ, թերի տեղեկատվությունը կարող է վնաս պատճառել սպառողի կյանքին, առողջությանը, գույքին և սեփականությանը՝ (տիրապետման տակ գտնվող) բնական ռեսուրսներին: Այդպիսին է, օրինակ, սննդամթերքի պահման, օգտագործման, օգտահանման պիտանիության ժամկետների և այլնի մասին թերի տեղեկատվությունը:

Բնական ռեսուրսներն սպառողի հողատարածքները, բուսականությունը, աղբյուրները և այլ բնական ծանապարհով առաջացած օբյեկտներն են: Եթե նշված օբյեկտներն օրենքով սահմանված կարգով համարվում են սպառողի սեփականությունը կամ գտնվում են նրա տիրապետման տակ, ապա դրանք տարբերվում են պետության սեփականությունը հանդիսացող բնական ռեսուրսներից: Օրենքը նախատեսում է սպառողի կյանքին, առողջությանը, գույքին, այդ թվում՝ բնական օբյեկտներին վնաս պատճառելու տարբեր պատասխանատվություն: Համաձայն «Սպառողների իրավունքների պաշտպանության» մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ նախատեսված է վնասների և կորուստների հատուցում: ՀՀ քաղաքացիական օրենսգրքը սահմանում է, որ վնաս հասցնողը պարտավոր է հատուցել՝ անկախ մեղքի ու տուժածի հետ պայմանագրային հարաբերությունների առկայությունից:

գիական օրենսգրքը սահմանում է, որ վնաս հասցնողը պարտավոր է հատուցել՝ անկախ մեղքի ու տուժածի հետ պայմանագրային հարաբերությունների առկայությունից:

Ապրանքի մասին վաճառքի վայրում սպառողին պետք է տրամադրվի անհրաժեշտ տեղեկատվություն: ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված է վաճառողի պատասխանատվությունը վաճառքի վայրում ապրանքի մասին սպառողին անհրաժեշտ տեղեկատվություն չտրամադրելու համար: «Սպառողի իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով կարգավորվում են սպառողին պատշաճ տեղեկատվության տրամադրման հարցերը: Այս դեպքում սպառողն իրավասու է պահանջելու վաճառողից առուվաճառքի պայմանագրի կնքումից անհիմն հրաժարվելու համար վնասների հատուցում (հրապարակային պայմանագիր), իսկ եթե պայմանագիրը կնքված է, ապա՝ ողջամիտ ժամկետում հրաժարվել պայմանագրի կատարումից և պահանջել վճարած գումարի վերադարձում ու այլ վնասների հատուցում:

Այսպիսով, օրենքը շահագրգիռ կողմերին գործնականում զրկում է ապրանքի (աշխատանքի, ծառայության) մասին ոչ ճիշտ, թերի տեղեկատվության տրամադրման պատճառով հասցված վնասների հատուցման պահանջի քննարկման ժամանակ սպառողի տեղեկացվածության վրա հիմնվելու հնարավորությունից: Օրենքը սահմանում է, որ այդ դեպքերում պետք է առաջնորդվել սպառողի հատուկ, մասնագիտական գիտելիքների բացակայության մասին պատճառաբանությամբ:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանվում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին տեղեկատվությունն սպառողին տրամադրելու արտադրողի (կատարողի, վաճառողի) պարտականությունը: Նշված դրույթի կարևորությունը կայանում է սպառողին ճշգրիտ տեղեկատվության տրամադրման պահանջում, ինչով ապահովվում է սպառողի կողմից ապրանքի (աշխատանքի, ծառայության) ճիշտ, ըստ օգտագործման և կիրառման նշանակության, ընտրությունը: Ճիշտ ընտրությունն ապահովվում է ապրանքի նշանակության, որակի, անվտանգության, օգտագործման պայմանների և այլնի մասին տեղեկատվության տրամադրմամբ:

Տեղեկատվությունը պետք է ունենա համապատասխան ծավալ, որը պետք է որոշի անձամբ ինքը՝ արտադրողը (կատարողը, վաճառողը): Արտադրողը (կատարողը, վաճառողը) չպետք է մոռանա ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման համար պատասխանատվության մասին, քանի որ տեղեկատվության լիարժեքության պահանջը սահմանվում է «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

ՀՀ կառավարությունը սահմանել է առանձին ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին տեղեկատվության տրամադրման կարգը, ինչը ենթակա է պարտադիր կատարման հանրապետության ողջ տարածքում:

Քանի որ օրենքը պարունակում է պարտադիր տեղեկատվության ցանկ, ապա ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված, ինչպես նաև արտադրողի (կատարողի, վաճառողի) կողմից տրամադրվող տեղեկատվությունը կարելի է դիտարկել, որպես լրացուցիչ տեղեկատվություն, որն արտահայտում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձնահատկությունները:

Տեղեկատվության տրամադրումն ապահովվում է սպառողի կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի անվտանգությունը: Դա պայմանավորված է նրանով, որ, համաձայն օրենքի պահանջի, այն պետք է պարունակի ապրանքի (աշխատանքի, ծառայության) հակացուցումների, երաշխիքային ժամկետի տևողության, վերանորոգում և երաշխիքային սպասարկում իրականացնող կազմակերպությունների, սերտիֆիկացման, համապատասխանության հավաստման և այլ հատկությունների մասին հավաստի տվյալներ:

Ինչի կարող է հանգեցնել կեղծ տեղեկատվությունը կամ սպառողի կողմից իրեն հետաքրքրող տվյալներն ապրանքի փաթեթվածքի վրա չգտնելը:

Մենք՝ սպառողներս, ավելի հաճախ օգտվում ենք սննդամթերք վաճառող մանրածախ առևտրի օբյեկտների ծառայություններից: Համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի՝ առևտրի օբյեկտներն են խանութները, կրպակները, տաղավարները, հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերը և այլն:

Սպառողը մտնում է խանութ և ցանկանում է գնել կարագ: Մեր պատկերացմամբ կարագը պետք է լինի սերուցքային՝ կովի կաթից ստացված: Սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պահանջներին համապատասխան՝ փաթեթի վրա պետք է նշված լինի կարագի բաղադրությունը, որտեղ նշվում է սերուցքի պարունակությունը, կամ այն մասին, որ դա միայն սերուցքային է: Եթե այդ տեղեկատվությունը բացակայում է, կամ այնքան մանր տառերով է գրված, որ հնարավոր չէ կարդալ, ապա հավանական է, որ «կարագ» անվանման տակ վաճառվում է պարզապես մարգարին, քանի որ, ըստ բաղադրության, այն համապատասխանում է մարգարինին: Սպառողին խորհուրդ է տրվում գնումներ կատարելիս ուշադիր ծանոթանալ փաթեթի վրա նշված բաղադրությանը:

Այս պահանջների բավարարումն առավել մատչելի է՝ գործարանային փաթեթվածք ունեցող սննդամթերք գներիս: Իսկ եթե ապրանքը կշռափաթեթավորվել է վաճառողի կողմից, ապա, համաձայն «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասի, վաճառողի կողմից սննդամթերքի կշռափաթեթավորում կատարելիս, ելնելով տվյալ ապրանքի առանձնահատկությունից, փաթեթավորման համար օգտագործում են հիգիենիկ և հակահամաձարակային ծառայության կողմից թույլատրված նյութերից պատրաստված փաթեթավորման միջոցները: Փաթեթավորվող սննդամթերքի փաթեթի կամ մեջքի պիտակների վրա նշվում են ապրանքի անվանումը, տեսակը, քաշը (նետոտ), 1 կգ-ի և կշռափաթեթավորված քաշի վաճառքի գինը, փաթեթավորման օրը, պիտանիության ժամկետը:

Ամիջապես աչքի է զարնում, որ բացակայում է «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքով սննդամթերքի բաղադրությանը, սննդային հավելումներին և այլ հատկություններին վերաբերող տեղեկատվությունը: Դրանք նշվում են արտադրական տարայի, փաթեթի վրա, որոնք ապահովում է արտադրողը: Վաճառողն սպառողին հետաքրքրող տեղեկատվությունը պարտավոր է նրան տրամադրել՝ հիմք ընդունելով արտադրողի տեղեկատվությունը: Տեղեկատվության բացակայության կամ այն վաճառողի կողմից սպառողին չտրամադրելու համար վաճառողը կրում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Դուք գնել եք ձեզ անհրաժեշտ սննդամթերքը և տանը պարզում եք, որ այն պատշաճ որակի չէ կամ արտաքինից կասկած է հարուցում (օրինակ, նրբերչիկի արտաքին շերտը լարծուն է, թթվասերի փաթեթը վնասված է, մսից ոչ դուրեկան հոտ է գալիս): Հաշվի առնել, որ այդ հատկություններով ապրանքները կարող են լինել պիտանիության ժամկետում: Պիտանիության ժամկետն անցած սննդամթերքի վաճառքն արգելված է: Առաջին հերթին պետք է նշել, որ վաճառողն իրավունք չունի այդ ապրանքները վաճառելու: Նա պարտավոր է դրանք

հանել վաճառքից: Այժմ պարզենք, թե ինչպես պետք է վարվեք դուք, որպեսզի պաշտպանեք ձեր ոտնահարված իրավունքները: Նախ, ուշադրություն դարձրեք, վերցրել եք արդյոք ձեր գնումը տվյալ վաճառողից կատարելու փաստը հաստատող դրամարկղային չեկը: Հիշեք, որ դրամարկղային չեկն անհրաժեշտ է ձեր բողոքը վաճառողին ներկայացնելու համար, և գնումներ կատարելիս հետևողականորեն պահանջեք այն ու մի շտապեք դեն նետել: Եթե վճարել եք և ստացել ձեզ անհրաժեշտ ապրանքն ու դրամարկղային չեկը, ապա դուք կատարել եք առավաճառքի պայմանագրի պայմանները: Դրամարկղային չեկը դրա ապացույցն է:

Ձեր գնած ապրանքը, որի որակը վստահություն չի ներշնչում, կարող եք վերադարձնել վաճառողին՝ պահանջելով «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանվող ձեր իրավունքների ապահովումը: Դուք կարող եք այդ պահանջները ներկայացնել, եթե վաճառողն ապրանքի թերությունների մասին նախապայման չի սահմանել: Միևնույն ժամանակ հիշեք, որ գնած սննդամթերքը կարելի է վերադարձնել պիտանիության ժամկետի ընթացքում: Կրկնում ենք՝ պիտանիության ժամկետն անցած սննդամթերքի վաճառքն արգելված է: ՀՀ կառավարությունը 2002 թվականի մարտի 6-ի # 217 որոշմամբ հաստատել է «Արտադրողի կողմից սահմանված պիտանիության ժամկետի ավարտից հետո օգտագործման համար ոչ պիտանի պարենային և ոչ պարենային ապրանքների» անվանացանկը:

Եթե վաճառողը չի ընդունում ապրանքը փոխարինելու կամ հետ վերցնելու ձեր պահանջը՝ համարելով, որ այն որակյալ է, ապա «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ վաճառողը (արտադրողը) պարտավոր է սպառողից ընդունել ապրանքը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ կատարել ապրանքի որակի ստուգում: Սպառողն իրավունք ունի մասնակցելու ստուգմանը:

Առավաճառքի պայմանագրի լուծման ժամանակ գումարի վերահաշվարկը կատարվում է վերադարձման գնի արժեքով: Եթե գինն իջել է, ապա վերահաշվարկը կատարվում է նախկին՝ ավելի բարձր գնով:

Դուք կարողացաք վերադարձնել անորակ ապրանքը: Ի՞նչ պետք է անի վաճառողը: Նա պարտավոր է այդ ապրանքը հանել վաճառքից: Սակայն պատահում է, որ մեր աչքի առաջ նույն վաճառողը շարունակում է վաճառել վերադարձված ապրանքի մնացած մասը: Այս փաստի կարգավորումն սպառողի խնդիրը չէ: Դա վերահսկողության մարմինների գործն է, որոնց օգնելու նպատակով սպառողը կարող է այդ մասին նրանց տեղյակ պահել:

Սպառողներն ունեն օրենքով կարգավորված բազմաթիվ իրավունքներ: Այդ իրավունքները նրանց առավել հասանելի դարձնելու համար քիչ ջանքեր չեն պահանջվում սպառողների հասարակական կազմակերպություններից:

Տեղեկացված սպառողն իրեն կպաշտպանի բոլոր իրավիճակներում: Ծիշտ է ասված, որ խեղդվողի փրկությունը խեղդվողի ձեռքերում է:

Անահիտ ԶԱԿԱԴՐՅԱԼ
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարության
գլխավոր մասնագետ

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԵԼ ՍԵՓԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ



Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-րդ հոդվածով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: ՀՀ ընդհանուր իրավասության դատարաններն են առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները: ՀՀ դատարաններում քաղաքացիական գործերով դատավարության կարգը սահմանվում է Քաղաքացիական դատավարության մասին ՀՀ օրենսգրքով և դրա կիրարկումն ապահովող այլ իրավական ակտերով:

Սպառողներն իրենց իրավունքների վերականգնման հարցերով իրավասու են դիմելու դատարանների օգնությանը: Նախքան դատարան դիմելը խորհուրդ է տրվում լրջորեն ուսումնասիրել ձեզ անհանգստացնող և ձեր իրավունքները ոտնահարող հարցերը, նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր և փաստեր: Ելնելով Քաղաքացիական դատավարության մասին ՀՀ օրենսգրքի և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներից՝ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը կախված է վեճի բնույթից:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, այնպես էլ անձամբ: Դատարան դիմելու համար յուրաքանչյուր գործով անհրաժեշտ է կազմել հայցադիմում: Հայցադիմումը փաստաթուղթ է, որում արտացոլվում են

ծագած վեճի հիմքերը: Կախված հայցադիմումի գրագետ ձևակերպումից՝ ենթադրվում են դատական ատյանների որոշումները: Պետք է հաշվի առնել, որ օրենսդրությամբ սահմանվում են հայցադիմումի ձևերը և լրացման կարգը: Քաղաքացիական դատավարության մասին ՀՀ օրենսգրքի 87-րդ հոդվածով սահմանվում են հայցադիմումի ձևը և բովանդակությունը:

Հայցադիմումը ներկայացվում է գրավոր: Նշվում են՝

1. Դատարանի անվանումը, որին ներկայացվում է հայցադիմումը:
2. Գործին մասնակցող անձանց անուն, ազգանուն, հայրանունները, նրանց բնակության (գտնվելու) վայրերի հասցեները, իրավաբանական անձի անունը, այդ թվում՝ հայցվոր քաղաքացու անձնագրային տվյալները, սոցիալական քարտի համարը՝ դրա առկայության դեպքում:
3. Հայցագինը, եթե հայցը ենթակա է գնահատման:
4. Հանգամանքները, որոնց վրա հիմնվում են հայցապահանջները:
5. Հայցվորի պահանջները, իսկ մի քանի պատասխանողի դեմ հայց հարուցելիս, հայցվորի՝ նրանցից յուրաքանչյուրին ուղղված պահանջները:
6. Հայցադիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Նույն օրենսգրքի 88-րդ հոդվածով սահմանվում են հայցադիմումին կցվող փաստաթղթերը, մասնավորապես, հայցադիմումին կցվում է սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարված լինելը հավաստող փաստաթուղթը կամ օրենքով նախատեսված դեպքերում պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու վերաբերյալ միջնորդություն:

Դատարան պետք է փոխանցել պատասխանողի՝ ձեզ հայտնի բոլոր տվյալները:

Անհրաժեշտ է համառոտ ձևակերպել վեճի ծագման պատճառները՝ նշելով, թե ինչ իրավունքներ են խախտվել, հնարավորության դեպքում, նշել՝ օրենքի որ դրույթների վրա են հիմնված ձեր պահանջները: Ցանկալի է մեջբերել օրենքի հոդվածների տեքստերը, որոնք դուք վկայակոչում եք ձեր հայցի հաստատման համար: Դիմումի մեջ պետք է հստակ նշված լինեն օրենքով սահմանված այն պահանջները, որոնք դուք ներկայացնում եք պատասխանողին:

ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄԻ ՕՐԻՆԱԿ

(Բնակավայր, համայնք)

(Դատարան)

Հայցվոր _____

Բնակության հասցեն _____

Պատասխանող _____

Հասցեն _____

Հայցադիմում

200- թ. փետրվարի 27-ին ձեռք բերեցի սառնարան «XXX» ֆիրմայի արտադրության, որի գինն էր «YYY» հա-

զար դրամ: Երեք ամիս անց սառնարանում հայտնաբերվեց անսարքություն, որի վերացման համար պահանջվում է սառնարանային ագրեգատ: Քանի որ սառնարանի համար վաճառողի կողմից հաստատված երաշխիքային ժամկետը դեռ չէր ավարտվել, 200- թվականի մայիսի 10-ին դիմեցի պատասխանողին՝ խնդրելով կատարել սառնարանի երաշխիքային վերանորոգում, սակայն նա ինձ առաջարկեց սառնարանն իմ հաշվին հասցնել արհեստանոց և վճարել վերանորոգման ծախսը՝ «xxx» դրամի չափով: Պատասխանողի գործողությունները համարում եմ անօրինական՝ հիմք ընդունելով հետևյալ փաստերը.

Համաձայն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի ա) կետի՝ սպառողն իրավունք ունի պահանջելու ապրանքի թերությունների անհատույց վերացում կամ սպառողի կողմից դրանց վերացման ծախսերի հատուցում: Նույն օրենքի 16-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ ապրանքը, որի քաշը 5 կգ-ից ավել է, հասցվում է վերանորոգման վայրը վաճառողի ուժերով կամ նրա հաշվին:

Համաձայն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապրանքի թերությունները պետք է վերացվեն արտադրողի (վաճառողի) կողմից՝ ապրանքի թերությունների վերացման վերաբերյալ սպառողի պահանջների ներկայացման օրից, 20 օրվա ընթացքում:

Պատասխանողի գործունեությամբ ինձ հասցվել է էական նյութական և բարոյական վնաս: Երեք ամիսից ավելի ես հնարավորություն չունեմ օգտագործելու սառնարանը, որի բացակայությունն ամառային սեզոնին ինձ զգալի նյութական վնաս է պատճառել և խաթարել է առողջությունս: Հիմք ընդունելով վերը նշված փաստերը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներով՝ խնդրում եմ.

1. Պատասխանողին պարտադրել կատարել անսարք սառնարանի վերանորոգումը՝ նրա վրա դնելով սառնարանի տեղափոխման և սեփական ուժերով ետ վերադարձման պարտավորությունները:

2. Պատասխանողից բռնագանձել օրենքով սահմանված չափի տուգանք՝ սառնարանի վերանորոգման ժամկետների խախտման համար:

3. Պատասխանողի հաշվին հատուցել կորցրած առողջությունս վերականգնելու ծախսերը:

Կից ներկայացվում են

- ♦ ապրանքային չեկի պատճենը,
- ♦ տեխնիկական անձնագրի պատճենը,
- ♦ վերանորոգման խնդրանքով դիմումի պատճենը,
- ♦ առողջական վիճակի մասին բժշկական եզրակացության պատճենը:

«-----» ----- 200- թ.

Ստորագրություն

Հաշվի առեք, որ հայցադիմումը կազմվում է մի քանի օրինակով՝ կախված պատասխանողների թվից: Օրինակ՝ եթե ձեր գործում երկու պատասխանողներ են, ապա դատարանին պետք է ներկայացնել երեք օրինակ, որոնցից մեկը մնում է դատարանում, իսկ մյուս երկուսն ուղարկվում են պատասխանողներին:

Դիմումը գրավոր փաստաթուղթ է, որին կցվում են հավաստի փաստաթղթեր, օրինակ՝ պայմանագիր, վճարման անդորրագիր, ապրանքային չեկ կամ վճարումը հաստատող այլ փաստաթուղթ, բժշկական տեղեկանք, ամուսնուժամարկ, անձնագրի պատճեն և այլն: Փաստաթղթերի ցանկը և հայցադիմումի նմուշները, որոշ գործերի տեսակները, որպես կանոն, փակցված են դատարանում: Դիմումին ավելի լավ է կցել փաստաթղթերի պատճենները, հատկապես եթե այն ուղարկում եք փոստով: Բնօրինակները ձեզ հետ կտանք դատարան:

Դատարան ներկայացվելիք նյութերը պատրաստելիս՝ անպայման պատճենեք հայցադիմումը և գործին վերաբերող բոլոր փաստաթղթերը: ձիշտ է առանձին թղթապանակ կազմելն ու այնտեղ բոլոր փաստաթղթերն ըստ հերթականության տեղավորելը: Դատական գործերի պատճենների առկայությունը կհեշտացնի դատական նիստին ձեր նախապատրաստվելը և կարող է պետք գալ փաստաբանի օգնությանը դիմելու ժամանակ:

ՀԱՅՅԱԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

Եթե պահանջվող փաստաթղթերը պատրաստ են, կարելի է գնալ դատարան: Ընդհանրապես, հայցը դատարան է ներկայացվում՝ ըստ պատասխանողի գտնվելու վայրի: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանվում է ընդդատությունը հայցվորի ընտրությամբ: Նշված դրույթի համաձայն՝ տարբեր մարզերում բնակվող պատասխանողների դեմ հայցը հայցվորի ընտրությամբ կարող է հարուցվել պատասխանողներից մեկի բնակվելու (գտնվելու) վայրի դատարան: Պատասխանողի դեմ, որի գտնվելու վայրն անհայտ է, հայց կարող է հարուցվել նրա գույքի գտնվելու վայրի կամ նրա բնակության (գտնվելու) վերջին հայտնի վայրի դատարան: Կատարման վայրի նշմամբ՝ պայմանագրից բխող հայցը կարող է հարուցվել պայմանագրի կատարման վայրի դատարան և այլն: Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի՝ սպառողը մինչև հայցադիմում ներկայացնելը պետք է վճարի օրենքով սահմանված չափի պետական տուրք:

Եթե մինչև դատական նիստը չեք կարող վճարել սահմանված տուրքը, ապա հայցադիմումին կից պետք է ներկայացնել հետևյալ բովանդակությամբ միջնորդագիր:

(Բնակավայր, համայնք)

(Դատարանին)

(Ա. Ա. Հ.)

(Բնակության հասցեն)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ թույլատրել պետական տուրքը վճարել դատարանի որոշման կայացումից հետո:

«----» ----- 200- թ.

Ստորագրություն

Հայցադիմումը կարելի է ուղարկել փոստով կամ փոխանցել դատավորին անձամբ: Հաշվի առնելով դատարանների ծանրաբեռնվածությունը՝ պատրաստ եղեք հերթերի:

Հիշեք, որ դատավորին խորհրդատվություն ստանալու

խնդրանքով դիմել չի կարելի: Նա խորհրդատվություն չի տրամադրում: Լավ դատավորը անկողմնակալ դատավորն է:

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարական օրենսգրքի 99-րդ հոդվածով սահմանվում է հայցադիմումի ընդունման կարգը: Հայցադիմումն ընդունելու հարցը դատավորը լուծում է միանձնյա: Դատավորը պարտավոր է վարույթ ընդունել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարական օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմում: Որոշ դեպքերում դատավորը կարող է մերժել հայցադիմումն ընդունելը: Մերժման պատճառներն սպառիչ սահմանված են Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական դատավարական օրենսգրքի 91-րդ հոդվածով: Հայցադիմումի ընդունման մերժումը, որպես կանոն, պայմանավորված է հայցվորի կողմից հայց ներկայացնելու՝ օրենքով սահմանված պահանջների խախտումներով: Օրինակ՝ եթե վեճը ենթակա չէ դատարանում քննության, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը, եթե կցված չեն անհրաժեշտ փաստաթղթերը, դիմումը ներկայացված է ուրիշ դատարան և այլն: Մերժելով հայցադիմումի ընդունումը՝ դատավորը պարտավոր է կայացնել մերժումը հիմնավորող որոշում՝ նշելով մերժման հիմքերը: Դատարանի որոշման պատճենը պետք է ձեզ հանձնվի բոլոր փաստաթղթերի հետ մեկտեղ: Դատարանում մնում են հայցադիմումի և դատարանի կողմից ընդունված որոշման մեկական օրինակները:

Եթե հայցադիմումի թերությունները հեշտությամբ կարելի է վերացնել (օրինակ՝ վճարված չէ պետական տուրքը), ապա դատավորը կայացնում է որոշում՝ դիմումը թողնել անհետևանք: Որոշման մեջ դատավորը հաստատում է ժամկետ, որի ընթացքում թերությունները պետք է վերացվեն: Եթե դատարանի կողմից հաստատված ժամկետում դատարանի պահանջները չեն կատարվում, հայցադիմումը համարվում է չներկայացված և վերադարձվում է հայցվորին: Եթե դուք համարում եք, որ դատարանի պահանջը հիմնավորված չէ, ապա հայցադիմումի մերժման որոշումը կարող եք բողոքարկել: Բողոքը ներկայացվում է վերադաս դատարան այն դատարանի գրասենյակի միջոցով, որտեղ քննվել է գործը: Բողոքի ներկայացման ժամկետը 15 օր է: Բողոքում պետք է նշել դատարանի որոշման հետ ձեր անհամաձայնության հիմքերը և ընդգծել օրենքի այն դրույթը, որը, ձեր կարծիքով, խախտվել է դատարանի կողմից:

Ներկայացվում է մասնավոր բողոքի մեկ օրինակ.

(Բնակավայր, համայնք)

(Դատարանին)

(Ա. Ա. Հ.)

(Բնակության հասցեն)

ՄԱՍՆԱԿՈՐ ԲՈՂՈՔ

Երևան քաղաքի _____ համայնքի առաջին ատյանի դատարանի 20.02.200- թ. որոշմամբ իմ քաղաքացիական հայցը թողնվել է անհետևանք: Այդ որոշման

համար դատարանը հիմք է ընդունել այն հանգամանքը, որ իմ հայցադիմումի պետական տուրքի գումարը մուծված չէ: Իմ հայցադիմումն անհետևանք թողնելու մասին դատարանի նման որոշմանը համաձայն չեմ, քանի որ ես դատարան հայցադիմում եմ ներկայացրել պահանջելով պատասխանողի հաշվին վերացնել նրանից ձեռք բերված սառնարանի թերությունները: Այդ պահանջը ես հիմնավորել եմ՝ վկայակոչելով «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը: Միաժամանակ հայցադիմումին կցել եմ խնդրանք պետական տուրքի վճարման ժամկետը մինչև դատարանի վճռի կայացումը հետաձգելու վերաբերյալ: Իմ կարծիքով դատարանի որոշումը կայացվել է ընթացակարգերի նորմերի խախտումով:

խնդրում եմ

1. _____ համայնքի առաջին ատյանի դատարանի
(Բնակավայր)
- 20.02.200 թ. որոշումը չեղյալ հայտարարել:
2. Գործն ուղարկել վերադաս դատարան՝ հայցն ըստ էության քննելու:

«__» _____ 200 թ.

Ստորագրություն

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ, համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի, պետական տուրք վճարողները իրավունք ունեն դիմելու համապատասխան պետական մարմիններ՝ պետական տուրքի արտոնություններ ստանալու համար: Նույն օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ տուրք վճարողները պարտավոր են ներկայացնել պետական տուրքի վճարման գծով իրենց վերապահված արտոնությունները հաստատող փաստաթղթերը: Միաժամանակ՝ 21-րդ հոդվածով սահմանվում են պետական տուրքի գծով արտոնություններ, որոնց թվում՝ դ) մասով սահմանվում է պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում: Նույն օրենքի 22-րդ հոդվածի է) մասով սահմանվում է, որ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են բոլոր հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով:

Այսպիսով, եթե դուք չունեք «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի նշված դրույթներով սահմանված արտոնությունները և իրավասությունները, ապա առանց սահմանված ժամկետում պետական տուրքի վճարման ձեր հայցադիմումի քննությունը բարդությունների առաջ կկանգի: Դատավորը կընդունի ձեզնից հայցադիմումը և կհանձնի ծանուցագիր հաջորդ ընդունելության համար՝ ժամանակ տրամադրելով պետական տուրքի վճարման համար: Հրավիրված կլինի նաև պատասխանողը: Եթե դիմումը ներկայացվել է փոստով, որոշ ժամանակ անց ձեզ փոստով ծանուցագիր կուղարկվի: Եթե ծանուցագիրն ուղանում է, դիմումի ձակատագրով կարող եք հետաքրքրվել դատարանի գրասենյակից: Փաստաթուղթն ուղարկելով դատարան փոստով՝ չմոռանաք պահանջել փոստային անդորրագիրը, որի վրա նշված ժամկետով դուք միշտ կարող եք գտնել փոստում կորած փաստաթղթերով ծրարը:

ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցադիմումի հիման վրա: Արդարադատություն իրա-

կանացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին: Դատավորների անկախության երաշխիքները սահմանվում են ՀՀ սահմանադրությամբ, Քաղաքացիական դատավարության մասին ՀՀ օրենսգրքով և այլ իրավական ակտերով: Քաղաքացիական գործերով արդարադատությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև քաղաքացիների և իրավաբանական անձանց հավասարության սկզբունքի հիման վրա: Քաղաքացիական դատավարությունն իրականացվում է կողմերի մասնակցությամբ իրավահավասարության հիման վրա:

Քաղաքացիական գործերով դատավարությունն իրականացվում է հայերեն: Գործին մասնակցող հայոց լեզվին չտիրապետող անձանց համար թարգմանչի միջոցով ապահովվում է գործերի նյութերին ծանոթանալու, դատավարական գործողություններին մասնակցելու և դատարանում այլ լեզվով հանդես գալու իրավունքը: Դատարանը կարող է գործին մասնակցող անձանցից պահանջել ներկայացնել գրավոր ապացույցների բնագրերի հայերեն թարգմանությունը՝ վավերացված օրենքով սահմանված կարգով:

Դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը դռնբաց է: Գործը դռնփակ նիստում քննելիս՝ ներկա են գտնվում գործին մասնակցող անձինք, նրանց ներկայացուցիչները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև վկաները, փորձագետները և թարգմանիչները:

Գործի քննությունը կատարվում է բանավոր: Գործի քննությունն իրականացվում է դատարանի անփոփոխ կազմով: Գործի քննության ընթացքում դատավորի փոխարինման դեպքում գործի քննությունն սկսվում է սկզբից: Յուրաքանչյուր գործով քննությունը կատարվում է անընդմեջ՝ բացի հանգստյան համար նախատեսված օրերից և ժամերից: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է մասնավորապես նվազագույն աշխատավարձի մինչև հիսնապատիկը կազմող հայցագին ունեցող հայցադիմումները, իսկ քաղաքացիական դատարանները քննում են նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող հայցագին ունեցող քաղաքացիական գործերը:

Գործին մասնակցող անձինք դատական ծանուցագրերով տեղեկացվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Ծանուցագիրն ուղարկվում է գործին մասնակցող անձի նշած հասցեով: Կողմը համարվում է պատշաճ կերպով տեղեկացված այն դեպքում, եթե դատարանում գոյություն ունի ծանուցագրի հանձնման հաստատումը:

Որոշ դեպքերում պատասխանողը հրաժարվում է ծանուցագիրը ստանալու մասին ստորագրություն տալուց: Այս դեպքում փոստատարից պահանջք նշում կատարել հանձնման տեղեկագրում՝ ծանուցագիրն ընդունելուց հրաժարվելու մասին: Փոստատարը պարտավոր է կատարել այդ նշումը: Բացի դրանից՝ ծանուցագիրը կարող է հանձնվել տեղամասային ոստիկանի միջոցով: Դրա համար դատարանը ծանուցագիր է ուղարկում ոստիկանության բաժանմունք՝ խնդրանքով, որ ծանուցագիրը հանձնվի պատասխանողին:


ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ

Անկասկած, դատավարության ամենակարևոր մասը դատական նիստն է: Այն հիշեցնում է թատերական բեմադրություն: Դատավարության ամեն մի քայլը կանոնակարգվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով: Դատավարության ամեն մասնակից ունի իր դերը և նույնիսկ իր տեղը դահլիճում:

Որպես կանոն, քաղաքացիական գործերը քննվում են բաց դատական նիստում, այսինքն՝ գործի հետ կապ չունե-

ցող յուրաքանչյուր քաղաքացի, կարող է դատավարության ժամանակ ներկա գտնվել դահլիճում: Նիստերի դահլիճի կարգը խախտելու համար դատավորն իրավունք ունի խախտում թույլ տված անձին նախազգուշացնելու, իսկ անհրաժեշտության դեպքում, հեռացնելու նիստերի դահլիճից և ենթարկելու օրենքով սահմանված այլ պատասխանատվության:

Դատարան չի կարելի բերել 16 տարին չլրացած երեխաներին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը երեխային կանչում է հարցաքննության, օրինակ՝ ամուսնալուծության մասին գործերով: Դատական նիստն սկսվում է



դատավարության մասնակիցների ներկա գտնվելը ստուգելով: Անհրաժեշտ է դատարան ներկայանալ անձնագրով: Ստուգելով գործի կապակցությամբ հրավիրված անձանց ներկայությունը, դատարանի դահլիճից դուրս են հրավիրվում վկաները: Այնուհետև դատավորը պարտավոր է կողմերին բացատրել իրենց իրավունքները և պարտականությունները:

Դատական նիստում վարվում է արձանագրություն: Արձանագրվում է այն ամենը, ինչ կատարվում է գործի քննման ընթացքում: Արձանագրությունը վարում է դատական նիստի քարտուղարը: Որպես կանոն, քարտուղարները չեն տիրապետում սղագրությանը և գրանցում են միայն այն, ինչը, իրենց կարծիքով, կարող է հետաքրքրություն ներկայացնել գործի համար: Հաշվի առնելով այդ, մի խոսքը շատ արագ, քարտուղարը պետք է հասցնի գրանցել ձեր ելույթը: Եթե դուք համարում եք, որ ձեր ասածից որևէ բան վկայի կամ պատասխանողի կողմից հնչեցրածից ավելի կարևոր է, դուք կարող եք խնդրանքով դիմել, որ ասված նախադասությունը գրանցվի արձանագրության մեջ: Արձանագրությունը պետք է պատրաստ լինի և ստորագրված դատարանի կողմից՝ դատական նիստի հաջորդ օրվանից ոչ ուշ: Կողմերը կարող են ծանոթանալ դատական նիստի արձանագրությանը և երեք օրվա ընթացքում դիտողություններ ներկայացնել: Դատավորը կարող է ընդունել դիտողությունը կամ մերժել, ինչի մասին կայացվում է համապատասխան որոշում: Անկախ այն բանից, ընդունվել են դատարանի կողմից ձեր դիտողությունները թե ոչ, դրանք պետք է կցվեն գործի նյութերին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 28 հոդվածի՝ կողմերն իրավունք ունեն ներկայացնելու միջնորդագրեր, բացարկներ, ծանոթանալու գործի նյութերին և դրանցից քաղվածքներ անելու, ներկայացնելու ապացույցներ և մասնակցելու դրանց հետազոտություններին, միմյանց հարցեր տալու, այդ դատական նիստում ծագած խնդիրների վերաբերյալ արտահայտելու սեփական կարծիքը՝ դատարանի որոշումները և վճիռները բողոքարկելու իրավունքով, գործի քննության ընթացքում ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու իրենց փաստարկները:

Ինքնաբացարկի իրավունքը: Համաձայն ՀՀ Քաղաքացիական Դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի՝ դատավորի ինքնաբացարկի հիմքերը սահմանվում են ՀՀ դատական օրենսգրքի 91-րդ հոդվածով: Դատավորն ինքնաբացարկ հայտնում է իր նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ: Դատավորը ինքնաբացարկ կարող է հայտնել միայն մինչև դատաքննությունն սկսվելը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անձը կապացուցի, իսկ դատավորը կհիմնավորի, որ ինքնաբացարկի հիմքն իրեն հայտնի է դարձել դատաքննությունն սկսելուց հետո և մինչև այդ չէր կարող հայտնի լինել:

Բացարկի հիմքերը սահմանված են օրենքով: Եթե դուք ինքնաբացարկ եք հայտնում դատավորին, պետք է ներկայացնեք առաջադրված պահանջի հիմնավորված ապացույց: Դատավորը, որը քննում է գործը, կարող է ընդունել ինքնաբացարկը կամ հիմնավորումով մերժել այն: Դատարանի վճիռը բացարկի հարցով ձևակերպվում է որոշումով: Նույն օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանվում են ինքնաբացարկի հետևանքները, որոնք են՝

- դատավորի ինքնաբացարկի դեպքում դատական միստը հայտարարվում է փակված,
- դատավորը փոխարինվում է նույն դատարանի մեկ այլ դատավորով,
- փոխարինված դատավորը գործի քննությունն սկսում է սկզբից:

Գործի նյութերին ծանոթանալու իրավունքը: ՀՀ Քաղաքացիական Դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածով սահմանվում են գործին մասնակցող անձանց իրավունքներն ու պարտականությունները: Այդ իրավունքները և պարտականությունները կողմերի մոտ ծագում են դատարանի կողմից գործի ընդունման պահից:

Սահմանված կարգի համաձայն՝ գործի նյութերը պահվում են դատարանի գրասենյակում: Օրենսդրությամբ չի սահմանված գործին ծանոթանալու ժամկետային սահմանափակում, սակայն դատարանների մեծամասնությունում դուք կարող եք ստանալ նյութերը միայն ընդունելության օրերին:

Որպեսզի շուտ գտնվի գործը, դուք պետք է իմանաք նրա համարը: Սովորաբար, այն նշվում է շապիկի վրա: Եթե գործի համարն անհայտ է, պետք է իմանալ այն դատավորի ազգանունը, որը քննում է գործը, և պատասխանողի անվանումը:

Գործի նյութերը տրվում են անձնագրի կամ այլ փաստաթղթերի հիման վրա գրավադրմամբ: Գործի նյութերին ծանոթանալու իրավունք ունեն միայն գործին մասնակից անձինք և նրանց ներկայացուցիչները, որոնք ունեն շահերը ներկայացնելու լիազորագիր:

Գործը դատարանից դուրս տանել չի կարելի: Դուք կարող եք ստանալ ցանկացած փաստաթուղթ, որը գտնվում է գործի մեջ և խնդրել դատարանի համապատասխան աշխատակիցներին հաստատել փաստաթղթի պատճենի իսկությունը:

Միջնորդագիր ներկայացնելու իրավունքը: Միջնորդագիրը խնդրանք է դատարանին՝ որևէ դատավարական գործողություն կատարելու մասին (վկայի հարցաքննումը, փորձագետի կարծիքը և այլն): Միջնորդագիրը կարող է լինել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Գրավոր միջնորդագիրը կցվում է գործի նյութերին: Միջնորդագիր կարելի է դատարան ներկայացնել նիստի ցանկացած փուլում:

Ապացույց ներկայացնելու և քննմանը մասնակցելու իրավունքը: Դա ոչ միայն իրավունք է, այլև կողմերի պարտականությունն է: Քաղաքացիական դատավարության սկզբունքներից մեկն է դատավարության մրցակցությունը: Դատավարության ելքը կախված է կողմերի ներկայացրած ապացույցների համոզիչ լինելուց: ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածով սահմանվում են ապացույցների հասկացությունը և տեսակները: Դրանք են.

- գրավոր և իրեղեն ապացույցները,
- փորձագետի եզրակացությունը,
- վկաների ցուցմունքները,
- գործին մասնակցող անձանց ցուցմունքները:

Բացի դրանից՝ դատարանի համաձայնության դեպքում, որպես ապացույց, կարող են քննարկվել ձայնային և տեսաձայնագրությունները: Եթե կողմերից որևէ մեկն անօրինական կերպով իր մոտ պահում է գրավոր ապացույց, դատարանն իրավունք ունի քննելու գործն առանց այդ փաստաթղթերի: Ընդ որում, տեղեկությունները, որոնք կողմերից մեկի կարծիքով պահվում են մյուս կողմի մոտ, համարվում են ապացուցված:

Իրեղեն ապացույցներ համարվում են տարբեր իրերը, որոնց օգնությամբ կարելի է որոշել գործի հանգամանքները (օրինակ՝ այրված հեռուստացույցի օգնությամբ կարելի է որոշել նրա այրվելու պատճառը): Առանձին կարելի է կանգ առնել այնպիսի ապացույցի վրա, ինչպիսին փորձագետի եզրակացությունն է: ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածը սահմանում է փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, իսկ 62-րդ հոդվածով սահմանվում է փորձագիտական եզրակացությունը՝ համաձայն որի այն տրվում է գրավոր: Փորձագիտական եզրակացությունը պետք է պարունակի՝

- նշում կիրառված մեթոդների մասին,
- կատարված հետազոտությունների մանրամասն նկարագիրը,
- հետազոտությունների արդյունքում արված հետևությունները,
- առաջադրված հարցերի հիմնավորված պատասխանները:

Ինչպես հայտնի է, չի կարելի մասնագետ լինել ամեն ինչում: Դատավորը պրոֆեսիոնալ իրավաբան է և, որոշ դեպքերում, վեժի ձիշտ լուծման համար նրան պետք է մասնագետի խորհուրդ: Դրա համար գոյություն ունի փորձաքննություն: Փորձաքննությունը ներկայացվում է դատական նիստի ժամանակ: Կողմերն իրավունք ունեն սեփական հարցերը ներկայացնելու փորձաքննության, ինչպես նաև առաջարկելու փորձագետի կամ փորձագիտական հիմնարկության թեկնածությունը: Փորձագետ կարող է լինել ցանկացած անձ, որը տիրապետում է պահանջվող բնագավառին (օրինակ՝ բժշկությանը) համապատասխան գիտելիքների: Փորձաքննության նշանակման մասին դատավորը կայացնում է որոշում, որը պետք է պարունակի հարցեր, որոնք վերաբերում են փորձագետին, փորձագետի կամ փորձագիտական հիմնարկության անվանմանը, ինչպես նաև վկայություն տալուց հրաժարվելու կամ կանխամտածված սուտ ցուցմունք տալու համար քրեական օրենսգրքով փորձագետի համար նախատեսված պատասխանատվություն կրելու մասին զգուշացմանը: Փորձաքննությունն անցկացնելու ժամանակ գործի քննությունը դադարեցվում է, քանի որ փորձաքննության որոշ տեսակներ պահանջում են երկար ժամանակ: Որպես կանոն, փորձաքննություն նշանակելու մասին որոշման հետ միասին փորձագետին ուղարկվում են դատական գործի նյութերը: Կողմերն իրավունք ունեն ներկա գտնվելու փորձաքննությանը: Փորձագետի պատրաստի եզրակացու-

թյունն ուղարկվում է դատարան՝ դատական գործերի հետ միասին: Դատավորը, ստանալով փորձաքննության արդյունքները, նշանակում է դատական նիստի շարունակման ժամկետը:

Նույն օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանվում են գործին մասնակցող անձանց ցուցմունքներ տալու իրավունքներն ու պարտականությունները: Անհրաժեշտ է ուշադիր ուսումնասիրել դրույթը և ցուցմունքներ տալու ժամանակ պաշտպանել ձեր իրավունքները: Այն բանից հետո, երբ դատավորը կողմերին բացատրում է իրենց դատավարական իրավունքները, ձշտում է կողմերի վստահությունը դատարանի գործը քննող կազմի նկատմամբ, ինչպես նաև քննարկում է կողմերի մոտ գտնվող միջնորդագրերը: Նա պարտավոր է առաջարկել կողմերին գործն ավարտել հաշտությամբ, այսինքն՝ կնքել հաշտության համաձայնագիր:

Համաձայն նույն օրենսգրքի 33-րդ հոդվածի՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ: Հաշտության համաձայնությունը գրավոր փաստաթուղթ է, որը ստորագրվում է կողմերի միջև գործի համար և արտացոլում է կողմերի՝ նպատակի հասած պայմանավորվածության էությունը: Հաշտության համաձայնությունը հաստատվում է դատավորի կողմից: Սրա հետ միաժամանակ դատավորը կայացնում է որոշում գործի քննությունը դադարեցնելու մասին: Եթե որևէ կողմը չի կատարում հաշտության համաձայնությունը, մյուս կողմն իրավունք ունի դիմելու հարկադիր կատարողին: Այդ դեպքում հաշտության համաձայնությունը ձեռք է բերում դատական որոշման ուժ և կատարվում է հարկադիր կատարողի կողմից ընդհանուր դատական որոշման կատարման կանոնների համաձայն:

Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրինական շահերը: Այդ դեպքում դատարանը վեժը քննում է ըստ էության: Եթե կողմերը հրաժարվել են հաշտության համաձայնագիր կնքելուց, դատավորն անցնում է գործի էությունը քննելուն: Նախ ելույթի իրավունք է ընձեռվում հայցվորին և նրա ներկայացուցչին, այնուհետև՝ պատասխանողին և նրա ներկայացուցչին: Ելույթները պետք է լինեն լակոնիկ: Ելույթ ունենալիս պետք չէ կարդալ սեփական հայցադիմումը: Ավելի լավ է պատմել այն, կարելի է նաև ավելի մանրամասն պատմել: Ելույթի վերջում հստակ ձևակերպեք հայցադիմումը: Եթե ձեր ելույթում շատ են թվերն ու տարեթվերը, նախապես գրեք դրանք թղթի վրա:

Ելույթի ժամանակ կողմերն իրավունք ունեն օգտագործելու ձայնագրություններ: Հիշեք, որ դատարանը հարաբերություններ պարզելու տեղ չէ: Եղեք առավելագույն քաղաքավարի, աշխատեք ուշադրություն չդարձնել հակառակ կողմի առարկություններին: Երբեմն պատասխանողը կարող է սադրանքի միջոցով հայցվորին գիտակցորեն դրդել վեժի, ուստի մի ենթարկվեք սադրանքների: Ամեն ելույթից հետո գործի մասնակից անձինք իրավունք ունեն հարցեր տալու ելույթ ունեցող անձինք: Չմոռանանք, որ ցանկացած գործողություն դատական նիստի ժամանակ կատարվում է դատավորի թույլտվությամբ, որը նախագահում է դատավարությունը: Նախ ելույթ ունեցողին հարց է տալիս դատավորը, այնուհետև՝ դատախազը (եթե նա մասնակցում է դատավարությանը), հետո՝ կողմերը և նրանց փաստաբանները:

Կողմերի բացատրություններից հետո հարցաքննվում են դատարան կանչված վկաները: Վկաներ համարվում են այն անձինք, որոնք կարող են հաստատել գործի այս կամ այն հանգամանքները: Վկաները կանչվում են դատարան կողմերի միջնորդագրերի հիման վրա կամ դատարանի նախաձեռնությամբ: Նրանք պետք է դատարան ներկայա-

նան անձնագրերով: Քանի որ վկաների հարցաքննման նախաձեռնողները, որպես կանոն, համարվում են կողմերը, դատական նիստի սկզբին վկաները գիտեն, թե գործի որ հանգամանքները նրանք պետք է հաստատեն: Մինչև հարցաքննության պահը վկաները գտնվում են դահլիճից դուրս: Նրանք հարցաքննվում են առանձին-առանձին: Սկզբում հարցաքննվում են հայցվորի կողմի վկաները, այնուհետև՝ պատասխանողի:

Հարցաքննությունից առաջ դատարանը պարզում է պատասխանողի և վկայի միջև թշնամական հարաբերությունների առկայությունը և զգուշացնում քրեական հետապնդման մասին՝ սուտ վկայության և վկայություն տալուց հրաժարվելու համար:

Կողմերն իրավունք ունեն վկաներին հարցեր տալու: Հարցաքննությունից հետո վկաները մնում են դահլիճում, որպեսզի բացառվեն շփումները հարցաքննված և չհարցաքննված վկաների միջև: Վկաների հարցաքննությունից հետո դատարանն անցնում է գործի գլխավոր նյութերի հետազոտմանը: Դատարանը կարող է գործում եղած բոլոր նյութերը: Գործի նյութերի հետազոտման ժամանակ կողմերը կարող են տալ իրենց բացատրություններն ամեն մի փաստաթղթի մասին, կարող են խնդրել դատավորին լրացուցիչ փաստաթղթերի կցման մասին, հակառակ կողմին ձգարտող հարցեր ուղղել գործի նյութերի վերաբերյալ: Գործի նյութերի հետազոտման ավարտից հետո դատարանն անցնում է վիճաբանությանը:

Կողմերի վիճաբանությունը դատավարության փուլ է, որի ժամանակ կողմերն իրենց ելույթներում ընդհանրացնում են դատական նիստից ստացված տեղեկությունները, վերլուծում դատական ապացույցների հետազոտությունները, տալիս իրավաբանական գնահատական գործի բոլոր հանգամանքներին և ձևակերպում իրենց դիրքորոշումը գործի վերաբերյալ: Վիճաբանության ելույթը կարող է կրել զգացմունքային բնույթ, սակայն չպետք է մոռանալ, որ դատավարության այս փուլի կարևոր խնդիրն է դատարանին համոզել ձեր դիրքորոշման իրավացիության և պատասխանողի առարկությունների չհիմնավորվածության մեջ:

Վիճաբանություններից հետո կողմերն իրավունք ունեն վերջնական առարկության, որից հետո դատավորը հեռանում է խորհրդակցության սենյակ՝ վճիռ կայացնելու: Քանի որ հիմնավորված վճիռ կազմելը ժամանակ է պահանջում, դատավորը կայացնում է միայն վճիռ եզրափակիչ մասը, որում նա արտահայտում է իր կարծիքը գործի որոշման վերաբերյալ: Վերջնական տեսքով վճիռը պետք է կայացվի դատական նիստից երեք օր անց: Կարդալով վճիռի եզրափակիչ մասը, դատավորը պարտավոր է կողմերին պարզաբանել վճիռի բողոքարկման կանոնները: Վճիռը կարող է բողոքարկվել վերադաս դատարան վերջնական կայացման պահից 15 օրվա ընթացքում:

ԵԹԵ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԸ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ

Հաճախ գործի ուսումնասիրումը հետաձգվում է կողմերից մեկի դատարան չներկայանալու պատճառով: Այդ իրադրությունը կարող է տևել տարիներ շարունակ, քանի որ առանց պատասխանողի և չբացահայտված պատճառների առկայության գործերը դատավորները չեն ուսումնասիրում և չեն կիրառում որևէ պատժամիջոց (օրինակ՝ տուգանք): Հայցվորի վարքագիծն այդ դեպքում կախված է պատասխանողին ծանուցագիր տրվելու ապացույցից:

Եթե այդպիսի ապացույց չկա, ապա մնում է միայն հաշտվել, որ գործի ուսումնասիրումը կհետաձգվի մինչև հաջորդ նիստը: Գործերի քանակի հետ կապված՝ տվյալ գործով հաջորդ դատական նիստը կարող է նշանակվել երկու-երեք ամիս հետո: Իսկ եթե կան ապացույցներ, որ պատասխանողին տեղեկացրել են դատական նիստի ժամկետ-

Գործ # 0000/00

(Բնակավայր, համայնք)

(Առյանի դատարան)

Կատարողական թերթ

200- թ. սեպտեմբերի 16-ին ուսումնասիրեցի գործը

(Ա.Ա.Յ.)

հայցով, ընդդեմ « _____ » ՍՊԸ-ի՝
պայմանագրի (անվանումը)

լուծման մասին, տուժավձար բռնագանձել:

Դատարանը որոշեց՝

Բռնագանձել « _____ » ՍՊԸ-ից՝ հօգուտ _____
(անվանումը) (Ա.Ա.Յ.)

50000 դրամ պայմանագրով մուծված:

Բռնագանձել « _____ » ՍՊԸ-ից հօգուտ _____
(անվանումը) (Ա.Ա.Յ.)

տուգանք 50000 դրամի չափով:
Իսկ ընդհանուր բռնագանձել 100000 դրամ:

Որոշումը օրինական ուժի մեջ է մտել 200- թ. սեպտեմբերի 27-ից:

Պարտապանը « _____ » ՍՊԸ, _____
(անվանումը) (բնակավայրի հասցեն)

Բռնագանձող՝ _____
(Ա. Ա. Յ. բնակության վայրը)

Կատարողական թերթիկը տրվել է 200- թ. սեպտեմբերի 30-ին:

Կնիքի տեղը
Դատավորի կնիքի համար

Դատարանի քարտուղարի
Չարկադիր կատարողի նշումները որոշման կատարման կամ կատարողական թերթի վերադարձման պատճառները նշելու համար՝

- 1. _____
- 2. _____

Կատարողական վարույթի մասնակիցները կողմերն են և նրանց ներկայացուցիչները: Կատարողական վարույթին կարող են մասնակցել փորձագետներ և թարգմանիչներ:

Կատարողական վարույթի կողմերը պահանջատերը և պարտապանն են: Պահանջատերն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, որի օգտին կամ ի շահ որի տրվել է կատարողական թերթը: Պարտապանն այն քաղաքացին կամ իրավաբանական անձն է, որը կատարողական թերթի համաձայն պարտավոր է կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ դրանց կատարումից:

տի մասին, իսկ դատարանի մոտ չկա տեղեկություն պատասխանողի չներկայանալու պատճառների մասին, ապա հայցվորը կարող է պահանջել գործի ուսումնասիրություն առանց պատասխանողի:

Եթե պատասխանողը պատշաճ ձևով տեղեկացվել է դատական նիստի տեղի և անցկացման ժամի մասին ու չի ներկայացել դատարան, ապա հայցվորի համաձայնության դեպքում պատասխանողի հանդեպ կարող է կայացվել հեռակա որոշում: Գործի ուսումնասիրման ժամանակ, կայացնելով հեռակա որոշում, դատարանն ունկնդրում է հայցվորին և սահմանափակվում այն ապացույցներով, որոնք առկա են գործում: Վճռի կայացման պահից, երեք օրվա ընթացքում, որոշման պատճենն ուղարկվում է չներկայացած կողմին: 15-օրյա ժամկետում չներկայացած կողմը կարող է դիմել դատարան խնդրանքով, որ հեռակա որոշումը չեղյալ հայտարարվի: Ընդ որում, դատարանին հարկ է ներկայացնել ապացույցներ, որոնք հաստատում են չներկայանալու պատճառների հարգելի լինելը: Եթե պատճառները համոզիչ են, դատարանը չեղյալ է համարում հեռակա որոշումը և նշանակում դատական նիստ, որի ժամանակ կրկին ուսումնասիրվում է գործն արդեն պատասխանողի մասնակցությամբ:

ՂԱՏԱԿԱՆ ՎՃՌԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Սպառողների մեծամասնությունը, որն ունի իր իրավունքների դատական պաշտպանության փորձ, գիտե, որ դատական որոշման կայացման և «կենդանի» գումարի միջև կա բարդ, երբեմն բավականին երկար փուլ:

ՂԱՏԱԿԱՆ ՎՃՌԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒՃԸ

Դատական վճիռն սկսվում է կատարվել միայն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Դա կատարվում է դատարանի կողմից կայացված որոշումից 15 օր հետո, եթե ոչ մի կողմը չի բողոքել վճռի վերաբերյալ: Սակայն եթե պատասխանողը համաձայն չէ դատական վճռի հետ, ապա 15 օրվա ընթացքում նա կարող է բողոքարկել վճիռը վերադաս դատարան:

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԻ ՍՏԱՅՈՒՄԸ

Կատարողական թերթը տրվում է դատարանի վճիռների, դատավճիռների և որոշումների, միջնորդ դատարանների վճիռների հիման վրա: Կատարողական թերթ տրվում է նաև ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և միջնորդ դատարանների վճիռների և որոշումների հիման վրա: Կատարողական թերթը տալիս է ակտն ընդունած դատարանը՝ պահանջատիրոջ կամ դրա համար հատուկ լիազորված նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովում է ՀՀ արդարադատության նախարարության համակարգում գործող դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը: Հարկադիր կատարման միջոցներն են պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը՝ արգելանք դնելու և այն իրացնելու միջոցով, պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելը, այլ անձանց մոտ գտնվող՝ պարտապանի դրական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելը և կատարողական թերթի կատարումն ապահովող այլ միջոցներ:


Հարկադիր կատարողը պաշտոնատար անձ է, որն զբաղվում է դատական որոշումների կատարմամբ:

Կատարողական թերթը բռնագանձման ներկայացնել կարելի է մեկ տարվա ընթացքում՝ դատական որոշման օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Կողմերի իրավունքներն ու պարտականությունները կատարողական վարույթում: Կատարողական վարույթի ընթացքում կողմերն իրավունք ունեն կնքելու հաշտության համաձայնություն, կատարողական թերթով իրավունքները փոխանցելու մեկ այլ անձի, ծանոթանալու կատարողական վարույթի նյութերին, քաղվածքներ անելու դրանցից, կատարելու միջնորդություններ, մասնակցելու կատարողական գործողություններին, տալու գրավոր և բանավոր բացատրություններ, ծագող բոլոր հարցերի վերաբերյալ ներկայացնելու փաստարկներ և նկատառումներ, հայտնելու բացարկներ և այլն:

Հարկադիր կատարողի գործողությունների կատարման կարգը կարգավորվում է «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին»


Սպառողների ազգային ասոցիացիայի իրավաբանական ծառայություն



դիմում - բողոքներ դիմում - բողոքներ դիմում - բողոքներ

ՄՊԱՌՈՂՆԵՐԻՅՑ ՍՏԱՅՎԱԾ ԴԻՄՈՒՄ - ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՅՑ ԼՈՒԾՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Սպառողներ - բողոքներ Սպառողներ - բողոքներ Սպառողներ - բողոքներ



դիմում - բողոքներ դիմում - բողոքներ դիմում - բողոքներ

Դեղատոմսերի հիմունքները - Դեղատոմսերի հիմունքները - Դեղատոմսերի հիմունքները - Դեղատոմսերի հիմունքները

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11.03.2004թ. թ. Երևան

Երևան քաղաքի Արարիկի և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարանը նախագահությամբ դատավոր՝ Ա. Հովհաննիսյանի, ուսումնասիրելով Անահիտ Հովհաննիսյանի կողմից ներկայացված հայցադիմումը

Պ Ա Ր Ձ Ն Յ

Անահիտ Հովհաննիսյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ «Արմենտեյ» ՀՀ ՓԲԸ-ի և «Թեյնայա» ընկերության՝ անբարեխիտ գովազդ օգտագործելու, ինչպես նաև գործարար շրջանառության սովորույթների խախտմանը մատուցված ծառայությունների դիմաց վճարման պարտավորություններից ազատելու պահանջի մասին:


Միաժամանակ միջոցառել է վերականգնել իր՝ 36-32-90 հեռախոսահամարի ծառայությունների մատուցումը:

Հաշվի առնելով, որ ՀՀ Փոստի և հաղորդակցության նախարարի 12.12.1998թ. բիլ 64 կրամանով հաստատված հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոնների 59 կետի համաձայն արգելվել է «Արմենտեյ» ՀՀ ՓԲԸ-ին դադարեցնել/այն դադարեցնել էր դադարեցված է՝ վերականգնել/ հեռախոսակապի ծառայությունների մատուցումը՝ հավելվածարով ծառայություններից օգտվելու արդյունքում պարտքը չվճարելու պատճառով, դատարանը գտնում է, որ միջոցառումներ ենթակա է բավարարման:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղ. դատ. օր-ի 97-99 և 144 հոդվածներով, դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Միջոցառումներ բավարարել:
 «Արմենտեյ» ՀՀ ՓԲԸ-ին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վերականգնել 36-32-90 հեռախոսահամարի կապի ծառայությունների մատուցումը:
 Որոշման կատարումը համեմարել էր Երևան քաղաքի ԴԱՀԿ ծառայությանը:

ԴԱՏԱՎՈՐ՝  Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայաստանում 1990-ականներին սպառողը հակված չէր հավատալու, թե սպառողական շուկայում սկիզբ առած իր բողոքը կարող է դրական լուծում ստանալ, հետևաբար շատ դժվար էր նրան համոզելը ներկայանալ ու համապատասխան փաստեր ներկայացնել: Այսուհանդերձ, նաև այդ պայմաններում ասոցիացիայի միջնորդությամբ սպառողներին վերադարձվել են գնած անորակ ապրանքի կամ մատուցված անորակ ծառայության հետևանքով առաջացած կորուստները:

Ասոցիացիայի ջանքերով 21-րդ դարում ապրող սպառողն արդեն ունի իր բողոքը լուծելու օրինակներ հիմք, այն է՝ 2002 թվականից գործողության մեջ մտած «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, որի մշակման ու ընդունման գործում մեծ ներդրում ունի Սպառողների ազգային ասոցիացիան: Ի դեպ, ասոցիացիայի աջակցությամբ դատարաններում 176 դատավարտվել է հօտուտ սպառողի: Եղել են նաև խմբային դատավարտություններ, և միևնույն խնդրի շուրջ ծավալված դատավարության արդյունքում բավարարվել է շուրջ 355 հայցադիմում:

Առանց դատական մարմինների միջամ-

Հայաստանի Հանրապետություն
 արաքի Կենտրոն և Կորը-Մարաշ համայնքների
 առաջին ատյանի դատարան

Հիմնադրման օրից, 1995 թվականից ի վեր, Սպառողների ազգային ասոցիացիան, իսկ 2003-ից նաև Հայաստանի սպառողների ազգային ակադեմիան, որի հիմնադիր անդամն է ասոցիացիան, բազմա-հազար տարաբնույթ դիմում-բողոքներ են ստանում սպառողներից, որոնք երբեք անպատասխան չեն մնում:

Սպառողները դիմում են իրենց շահերի պաշտպաններին՝ թե գրավոր փաստեր ներկայացնելով, թե պարզապես հեռախոսագանգի միջոցով: Երբ դիմում-բողոքը գրված ու հիմնավորված է փաստերով, շատ ավելի մեծ է հավանականությունը, որ այն լուծում կստանա ի շահ սպառողի: Այս պարզ ճշմարտությունը տարիների ընթացքում ավելի ու ավելի է ընդունվում հայ սպառողների կողմից՝ ընդհիվ ազգաբնակչության շրջանում սպառողական գիտակցության բարձրացման: Անհամեստ թող չհնչի, բայց Սպառողների ազգային ասոցիացիան ու Հայաստանի սպառողների ազգային ակադեմիան մեծ ավանդ ունեն այս գործում: Եղել են, որ Հայաստանում իրազեկ սպառողի ծավալումն ու սպառողական ինստիտուտի կայացումն այս կազմակերպությունների գործունեության գլխավոր նպատակն են:


Կատարողական թերթ

Կտրմ № 2-2399 14.06-200 թ.

Երևանի Կենտրոն և Կորը-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի քննարկով գործն լուծելու հայցի (ստանդարտացի)՝ Անահիտ Հովհաննիսյանի կողմից, և նրան հետևել, ՀՀ ՓԲԸ, «Թեյնայա» ընկերության անբարեխիտ գովազդ օգտագործելու հետևանքով մատուցված ծառայությունների դիմաց վճարման պարտավորություններից ազատելու պահանջ:

Վճուճել (որոշել) է՝

Հայցի բավարարել:
 «Արմենտեյ» ՀՀ ՓԲԸ-ին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վերականգնել 36-32-90 հեռախոսահամարի կապի ծառայությունների մատուցումը:
 Որոշման կատարումը համեմարել էր Երևան քաղաքի ԴԱՀԿ ծառայությանը:



Դեղատոմսերի հիմունքները - Դեղատոմսերի հիմունքները - Դեղատոմսերի հիմունքները - Դեղատոմսերի հիմունքները

դիմում - բողոքներ դիմում - բողոքներ դիմում - բողոքներ

Ապառազներ սպառնալիք
 Անսպասելի և անարար
 արհեստական խոսքեր
 փակել շեշտակա հարցումներ
 փ. Երևան - 32 Չեխով 4. 2711.
 Օւկրաինա Պուլավա 091 74 95 67

ՊԵՏՐՈՎ - ԿՐԻՍՏ
 Անձնական ֆելե էմ 26.12.06.թ. ՉԻ. ՎԻ. ՅԵ. Խանարյան,
 որի գրեթե 5 թանակաբանական լուծումներ
 կան - օրից աչք է անհետացել: Երեք անգամ վար-
 ապետ են հարցազրույցներ, որի փորձում Եր Խանարյան ՏԵՂ
 վրա՝ մասնակցորեն ՏԵՂ Խանարյանի 5: ՎԻՍՅԵ ԽԵՂ
 մասնակց են Եր, որ ՏԵՂ Կրիստովիչ՝ մասնակց, որ
 պարտավորված է լինում: Պա Էլ լուծում կան 5, որ սպա-
 րտաբանական, ունի զարմարական շեշտակա: Անս-
 անական, ունի ՏԵՂ Կրիստովիչ Խանարյանի կրթում:
 Քեզ բան էի Երևանի Կրիստովիչ Կրիստովիչ Խանարյանի
 վերաբերյալ օրից:
 Քեզ բան էի չէր անցանկալի արդյունք սպա Խանարյան:
 22.05.07. Օւկրաինա

հակված են դիմելու ասո-
 ցիացիայի օգնությանը:
 Իսկ երբ սպառողի խնդիր-
 ընթացակարգը է ասո-
 ցիացիայի կողմից, այն
 անսպասելիորեն դրական լու-
 ծում է ստանում, քանի որ
 սպառողի քիչ քանակի
 օրենքին, սպառողի իրա-
 վունքներին ու պարտա-
 կանություններին քաջա-
 տեղյակ մարմինն է:

Պետք է խոստովանել,
 որ այս առումով սպառող-
 ների վիճակը բնավ երա-
 նելի չէ մարզերում՝ հատ-
 կապես գյուղական բնա-
 կավայրերում: Ընդ որում,
 որքան՝ հեռու մայրաքա-
 ղաքից, այնքան՝ ավելի
 վատ:

Սիրելի սպառող, ան-
 կախ բնակության վայրից,
 սպառողական շուկայում
 ծագած խնդիրներին պար-
 զաբանումներ և լուծում-
 ներ ստանալու համար
 կարող եք օգտվել ասոցի-
 ացիայի թե՛ գծից՝ գան-
 զահարելով 249-204 հե-
 ռախոսահամարով:

Ապառազներ սպառնալիք
 անսպասելի և անարար
 արհեստական խոսքեր
 փակել շեշտակա հարցումներ
 փ. Երևան - 32 Չեխով 4. 2711.
 Օւկրաինա Պուլավա 091 74 95 67

ՉԻՎԵՎ ԿՐԻՍՏՈՎ - ՊԵՏՐՈՎ
 անձնական և անհարգանք
 արհեստական խոսքեր
 փակել շեշտակա հարցումներ
 փ. Երևան - 32 Չեխով 4. 2711.
 Օւկրաինա Պուլավա 091 74 95 67

06.06.07. Օւկրաինա Օւկրաինա

տության՝ ասոցիացիայի և
 ակադեմիայի մասնագետնե-
 րի միջնորդությամբ նույն-
 պես սպառողների բազմա-
 թիվ դիմում-բողոքներ դրա-
 կան լուծում են ստանում: Չի
 կարելի անտեսել նաև տա-
 րիների ընթացքում մեր ար-
 տադրող, ներկրող, վաճա-
 ռող և ծառայություն մատու-
 ցող ընկերությունների վերա-
 բերմունքի փոփոխությունն
 սպառողների խնդիրների
 նկատմամբ: Չէ՞ որ այդ ընկե-
 րություններում և՛ դեկա-
 վար թե աշխատակից, նախ
 և առաջ, սպառող են, և
 նրանց սպառողական գի-
 տակցությունն էլ տարիների
 ընթացքում համապատաս-
 խան վերելք է ապրել: Ցավոք
 սրտի, ծագած խնդիրների
 լուծման առումով սպառողի
 հետ ուղղակի փոխհարաբե-
 րություններն առայժմ հազ-
 վադեպ են սպառողի համար
 ցանկալի արդյունք ունե-
 նում, ուստի սպառողները

Սիրելի սպառող, անկախ բնակության վայրից, սպառողական շուկայում ծագած խնդիրներին պարզաբանումներ և լուծումներ ստանալու համար կարող եք օգտվել ասոցիացիայի թե՛ գծից՝ գանզահարելով 249-204 հեռախոսահամարով:

դիմում - բողոքներ դիմում - բողոքներ դիմում - բողոքներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ CONTENTS

Իրազեկ սպառողի ձևավորումը Formation of an aware consumer	2
«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը RA law on Consumer Rights Protection	4
Արտադրողի (կատարողի, վաճառողի) պատասխանատվությունն ապրանքի (աշխատանքի, ծառայության), արտադրողի (կատարողի, վաճառողի) մասին ոչ պատշաճ տեղեկատվության տրամադրման համար Producer s (doer s, seller s) responsibility for providing incorrect information about the product (activity, service), producer (doer, seller)	19
Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին տեղեկատվություն Information about products (activities, services)	20
Ինչպես պաշտպանել սեփական իրավունքները դատարանում How to protect your rights in court	22
Սպառողներից ստացված դիմում - բողոքների և դրանց լուծմանը վերաբերող օրինակներ Examples of complaints from consumers and solutions	29

«Սպառող» ամսագրի արտահերթ համարը լույս է տեսել «Իրազեկ սպառողի ձևավորումը»
ծրագրի շրջանակում՝ «Ան ֆրանսեն»
հիմնադրամի աջակցությամբ:

Special issue of the Sparogh (Consumer) magazine was published within the framework of the project
Promoting Consumer Awareness in Armenia supported
by Anne Fransen Fund.

Հասցեն՝ Դավիթ Անհաղթ 23, 3-րդ հարկ Հեռ.՝ 24-92-04, 24-63-47 E-mail: anna_cna@armline.am URL: http://yp.infocom.am/companies/eng/11.html/	Տպագրվել է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը Բաժանվում է անվճար Գրանցման վկայականը՝ 2215 Հղումը «ՍՊԱՌՈՂ»-ին պարտադիր է
Տպաքանակը՝ 5000: Ծավալը՝ 2 մամուլ	